

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԿՈՄԻՏԱՍԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

1894

Հունվար 1, Էջմիածին- Միաբաններից հետո Գևորգյան Ճեմարանի սաները ուսուցիչների առաջնորդությամբ այցելում են կաթողիկոս Խրիմյանին՝ նրա Ամանորը շնորհավորելու: Խրիմյանը օրհնում է ուսուցիչներին և աշակերտներին՝ բոլորին նվիրելով օրացույց, իսկ լսարանցիներին և ուսուցիչներին [որոնց թվում նաև Սողոմոն սարկավազին՝ իր հեղինակած «Հրաւիրակ երկրին Աւետեաց» գիրքը:

«Արարատ», 1894, No 1, էջ 4:

Հունվար, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանի երգեցողության ուսուցիչ Սողոմոն սարկավազ սարկավազ Սողոմոնյանը դասավանդմանը զուգընթաց Ճեմարանի սաների մասնակցությամբ կազմակերպում է նաև քառաձայն երգչախումբ և «... յաւուրս եկեղեցական և կայսերական տօնից եւս եւ յամենայն կիրակնամուտ եւ յաւուրս կիրակէից, համախմբեալք ընթանային յեկեղեցի, երգիչք դաս-դաս հերթակալութեամբ հանապազ զպաշտօնն կատարէին առաջնորդութեամբ Հ. Կոմիտաս վարդապետի»:

«Էջմիածին», 1948, No 1-2, էջ 54:

[**Հունվար»փետրվար 5], Էջմիածին-** Մեսրոպ արքեպիսկոպոսը, Ղևոնդ վարդապետի միջնորդությամբ Կոմիտասի մոտ է ուղարկում մի տիրացուի և պատվիրում է, որ նա քննի վերջինիս երաժշտական գիտելիքները և եթե հնարավոր է՝ մեկ»երկու ամսվա ընթացքում սովորեցնի «յարուեստի երաժշտութեան յեկեղեցական ձայնագրութիւն հայոց»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 165:

Փետրվար 6, Վաղարշապատ- Սողոմոն սարկավազը պատասխան նամակ է գրում Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանին: Հայտնում է վերջինիս, որ տիրացուի գիտելիքները խառնաշփոթ են: Եվ որպեսզի նա «... կարողանա,- գրում է Կոմիտասը,- յանսայթաք և յանշեղ գիտութիւնն զգեղարուեստիդ ի կիր արկանել եկեղեցական եղանակս», ապա պետք է մեկ տարի ևս սովորի:

Նույն տեղում

[**Հունվար, մարտ], Վաղարշապատ-** Սողոմոն Սողոմոնյանը Էջմիածնում տեսակցում է «Հնությունք Ակնա» գրքի հեղինակ Հովսեփ Ճանիկյանի հետ: Վերջինիս խնդրանքով Սողոմոն Սողոմոնյանը ոչ միայն սրբագրում է նախկինում (1892 թ.) գրի առած 8-10

երգերը, այլև նոր եղանակներ է ավելացնում և Ակնա երգերի ընդհանուր թիվը հասցնում 25-ի:

Չ. Ճանիկյան, Հնությունք Ակնա, 1895, էջ 502:

Ապրիլ 9, Էջմիածին- Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը Ղ. Աղայանի, Լ. Մանվելյանի, Վ. Աբովյանի և այլոց հետ մասնակցում է Գևորգյան Ճեմարանի ուսուցչական խորհրդի ԺԶ նիստին: Ժողովը նվիրված էր Ճեմարանի տարեվերջյան քննության հարցերին: Ըստ արձանագրության կցած ցուցակի՝ Սողոմոն Սողոմոնյանը պետք է ձայնագրությունից քննություն ընդուներ Դ դասարանում և ընթերակա լինելու Ձ դասարանի Ս. Գրոց ուսման քննության ընթացքում:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 269, թ. 70:

Ապրիլ 27, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում տեղի է ունենում ուսուցչական խորհրդի ԺԷ նիստը: Ղ. Աղայանի, Լ. Մանվելյանի, Խ. Ստեփանեի, Վ. Աբովյանի, Սողոմոն աբեղայի և այլոց մասնակցությամբ ժողովը քննարկում է Ճեմարանի լսարանական բաժնի երկու ուսանողների խնդրանքը իրենց վկայական տալու և Ճեմարանը թողնելու մասին:

ՀՀ ՊԿՊԱ, ֆ.312, թղթ. 26, վավ.270, թ.70:

[**Ապրիլ 20 « 10 մայիս**], **Էջմիածին**- Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը Ձայնագրություն առարկայից քննություն է վերցնում Ճեմարանի դպրոցական բաժնի Դ դասարանում (երգիչ Արմենակ Շահ)՝Սուրադյանը գտնվում էր քննություն հանձնողների մեջ):

Նույն տեղում:

Մայիս 15, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում տեղի է ունենում ուսուցչական խորհրդի ԺԸ նիստը: Ղ. Աղայանի, Խորեն Ստեփանեի, Սողոմոն սարկավագի, Լ. Մանվելյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ ժողովում քննարկվում է սովորողների տարեկան գնահատականների նշանակումն արագացնելու և ավարտական շարադրանքները մինչև մայիսի 25-ը հանձնելու հարցը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ.26, վավ.271, թ. 72:

Մայիսի 16, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԺԹ նիստը: Դաստիարակ Ղ. Աղայանի, Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանի, Լ. Մանվելյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ ժողովը քննարկում է Ե դասարանի, Ա և Գ լսարանների փոխադրվողների ու ավարտողների հարցը:

ՀՀՊԿՊԱ,ֆ.312, թղթ. 26, վավ. 272, թ. 73:

Մայիս 29, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում տեղի է ունենում ուսումնական խորհրդի Ի նիստը: Դաստիարակ Ղ. Աղայանի, Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանի, Լ. Մանվելյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ ժողովը քննարկում է դասարանական աշակերտների փոխադրումների հարցը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ.273, թ. 74:

Մայիս 31, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԻԱ նիստը: Դաստիարակ Ղ. Աղայանի, ուսուցիչներ Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանի, Խ. Ստեփանեի, Լ. Մանվելյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ ժողովը քննարկում է Ջ դասարանը ավարտողների հարցը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 275, թ. 75:

Հուլիս 5, Էջմիածին- Սողոմոն Սողոմոնյանը նամակով դիմում է Երևանի փոխթեմակալ Կյուրեղ եպս. Սրապյանին և խնդրում է իր աշակերտ, Վաղարշապատի գյուղացի Կարապետ Տեր-Ասկարյանին նշանակել Երևանի թեմի հայոց ծխական դպրոցներից մեկում որպես երգեցողության ուսուցիչ:

«Տեղեկագիր», ԳԱ, No 9, էջ 104:

Հուլիս, Վաղարշապատ- «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է Սողոմոն սարկավագի «Հայոց եկեղեցական եղանակները» խորագրով հոդվածի սկիզբը:

Ենթավերնագրեր՝ «Հոգևոր երգերի ձևն ու բովանդակությունը», «Տաղ հարության», «Շարականների ձևն ու բովանդակությունը», «Շարականների և հոգևոր երգերի եղանակները», «Մանրուսումն: Մանրուսման եղանակները»:

Հոդվածի մեջ հրատարակված է «Տաղ հարության» երգը, նաև խոսքը և ձայնագրությունը, ապա գրառում՝ երգեց արժ. Գևորգ վրդ. Ռշտունին, ձայնագրեց (հայկական ձայնանիշերով) Սողոմոն սարկավագը:

Հոդվածը հրապարակված է Սողոմոն Ա[վագ] Ս[արկավագ] Սողոմոնյան ստորագրությամբ:

«Արարատ», 1894, No 7, էջ 227:

Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941, էջ 105-115:

Հուլիս»օգոստոս, Վաղարշապատ- «Արարատ» ամսագրի հերթական համարում լույս է տեսնում Սողոմոն սարկավագ Սողոմոնյանի «Հայոց եկեղեցական եղանակները» խորագրով աշխատությունը:

«Արարատ», 1894, No 7-8, էջ 222-227, 256-260:

Օգոստոս 7, Կ. Պոլիս- «Հայրենիք» օրագրի (օրաթերթ) հերթական համարում Սողոմոն Ա. Ս. Սողոմոնյան ստորագրությամբ տպագրվում է Կոմիտասի «Հայոց եկեղեցական եղանակները» խորագրով հոդվածի սկիզբը Ա [գլուխը]:

«Հայրենիք», 1894, Կ.Պոլիս, No 896:

Օգոստոս 8, Կ. Պոլիս- «Հայրենիք» օրագրի (օրաթերթի) հերթական համարում Սողոմոն Ա. Ս. Սողոմոնյան ստորագրությամբ հրապարակվում է Կոմիտասի «Հայոց եկեղեցական եղանակները» խորագրով հոդվածի շարունակությունը Բ [գլուխը]:

«Հայրենիք», Կ. Պոլիս, 1894, No 897:

Օգոստոս, Վաղարշապատ- «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է Սողոմոն սարկավազի «Հայոց եկեղեցական եղանակները» խորագրով հոդվածի շարունակությունն ու վերջը:

Ենթավերնագրեր՝ «Հաղագս ձայնից թե ուստի գտավ», «Մանրուսման եղանակների այբբենական ցանկը», «Ութն ձայնի նրբությունները»:

Հոդվածը հրապարակված է Սողոմոն Ա[վազ] Ս [արկավազ] Սողոմոնյան ստորագրությամբ:

«Արարատ», 1894, No 8, էջ 256:

Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941, էջ 115-125:

Սեպտեմբեր 2, Կ. Պոլիս- «Հայրենիք» օրագրի (Օրաթերթ) հերթական համարում Սողոմոն Ա. Ս. Սողոմոնյան ստորագրությամբ հրապարակվում է Կոմիտասի «Հայոց եկեղեցական եղանակները» խորագրով հոդվածի շարունակությունն ու վերջը:

«Հայրենիք», 1894, Կ. Պոլիս, No 922:

Սեպտեմբեր 9, Էջմիածին- Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը վեհարան է հրավիրում «Կարապետ, Ստեփանոս, Սողոմոն, Տիգրան, Ղևոնդ և Հուսիկ սարկավազներին և սրտառուչ ու ազդու խոսքերով» օրհնում է նրանց և ավելացնում է. «... չունիմ օգնականներ, դուք կլինեք իմ գործակիցները, մեր շուրջը խավար է տիրում, դուք եղեք լուսատու ճրագ, Հայրիկը ձեզնով կսկսե ամեն ինչ, դուք պետք է լինիք հնազանդության և հեզության օրինակ»:

«Արձագանք», 1894, No 107:

«Արարատ», 1894, No 9, էջ 290:

Սեպտեմբեր 11, Էջմիածին- Մկրտիչ Ա կաթողիկոսի բանավոր հրամանի հիման վրա Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը Գայանե վանքում Ղևոնդ վարդապետ Հովակիմյանի խարտավիլակությամբ վեց այլ սարկավազների հետ կուսակրոն արեղա է ձեռնադրում նաև Սողոմոն ավազ սարկավազ Սողոմոնյանին: «Վեհափառ հայրապետը,- ասված է «Արարատ» ամսագրում,- բարեհաճել էր ուշադրություն դարձնել նույնիսկ նոցա անունների վրա»: Նրա հաճությամբ Քեթոսահիացի Սողոմոն սարկավազ Սողոմոնյանը ձեռնադրվելով արեղա՝ ստանում է **Կոմիտաս** անունը:

Ձեռնադրությունից հետո նորընծա արեղաները այցելում են Գևորգ Չորրորդ կաթողիկոսի շիրիմին և կատարում են «լռիկ հոգեհանգիստ»:

«Արարատ», 1894, No 9, էջ 290:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 62:

Սեպտեմբեր 12, Էջմիածին- Նորընծա արեղաներին այցելում է Մեսրոպ արքեպիսկոպոսը: Տալով մի քանի խրատներ՝ հայտնում է, որ երեկոյան կատարվելու է վեղարի տվչություն:

Նույն օրը, երեկոյան- Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի ներկայությամբ Մեսրոպ Սմբատյանը «կուսակրոնության վեղար» է տալիս Սողոմոն արեղա Սողոմոնյանին և

մյուս վեց արեղաներին, որից հետո նորընծաները վերադառնում են իրենց խուցերը, որտեղ «պետք է պահեին սահմանված քառասունքը»:

«Արարատ», 1894, No 9, էջ 290:

Սեպտեմբեր 16, Թիֆլիս- «Արձագանք» շաբաթաթերթի «Ներքին տեսություն» բաժնում հրապարակվում է հաղորդագրություն վեհարանում Խրիմյան կաթողիկոսի Կարապետ, Ստեփանոս, Սողոմոն, Տիգրան, Ղևոնդ և Հուսիկ ավագ սարկավագների հետ ունեցած «արտառուչ և ազդու» գրույցի մասին:

«Արձագանք», 1894, No 107:

Սեպտեմբեր առաջին կես, Էջմիածին- Մեսրոպ արքեպս. Մմբատյանը իր «Հիշատակարան-ժամանակագրություն» վերնագրով մատյանում գրում է «Յաւուր վերացման խաչի, բանաւոր հրամանաւ վեհափառ Տ. Մկրտիչ կաթողիկոսի ամենայն հայոց ձեռնադրեցի ի Սուրբ Գայանէի վանս վկայութեամբ Ղևոնդ վարդապետի զհետևեալ սարկաւագունս ի կուսակրօն քահանայ:

Սօղօմոն արեղայ Սօղօմոնեանց ի տաճկահայոց ի Գուտինայ քաղաքէ, փոխարկեալ զՍօղօմոն անուն ի Կոսմիտաս»:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 283, թ. 16:

Սեպտեմբեր 17, Թիֆլիս- «Մշակ» լրագիրը ծանուցում է, որ վեհափառ Խրիմյանի հրամանով Շամախու առաջնորդ Մմբատ արքեպիսոպոսը սեպտեմբերի 11-ին կուսակրոն քահանա է ձեռնադրել Վահան, Կարապետ, Ստեփան, Սողոմոն, Ղևոնդ, Հուսիկ և Տիգրան սարկավագներին:

Ասված է նաև, որ ձեռնադրվելուց առաջ սարկավագները հոգեհանգիստ են կատարել Ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ-ի շիրիմին:

«Մշակ», 1894, No 7:

Սեպտեմբեր 21, Թիֆլիս- «Արձագանք» շաբաթաթերթի հերթական համարի «Ներքին տեսություն» բաժնում հրապարակվում է Էջմիածնից ստացված հաղորդագրություն, ուր բերված են նորընծա արեղաների անունները, որոնք ձեռնադրման ընթացքում անվանակոչվել են կաթողիկոս Խրիմյանի կողմից:

«Արձագանք», 1894, No 109:

Սեպտեմբեր 25, Էջմիածին- Հանդիսավորությամբ տոնվում է Գեվորգյան Ճեմարանի 20-րդ տարեդարձը: Կոմիտասի ղեկավարած երգեցիկ խումբը կատարում է «Ոհ, ինչ չքնաղ» երգը:

«Արարատ», 1894, No 9, էջ 292:

[Օգոստոս, սեպտեմբեր], Էջմիածին- Գևորգյան Ճեմարանի նկարչության ուսուցիչ Եղիշե Թադևոսյանը Ներսիսյան լճափում նկարում է Կոմիտաս արեղային:

Հայաստանի ազգային պատկերասրահ, մշտական ցուցադրություն

Հոկտեմբեր 22, Էջմիածին- Ավարտվում է Կոմիտասի արեղա ձեռնադրվելու առիթով

սահմանված քառասունօրյա պահեցողությունը:

Քառասունքի սկիզբը՝ 13 սեպտեմբերի:

«Արարատ», 1894, No 9, էջ 290:

Հոկտեմբերի վերջ, Վաղարշապատ- Նորընծա Կոմիտաս արեղան Խրիմյան Հայրիկի հանձնարարությամբ սկսում է շաբաթական երկու անգամ երաժշտության ու երգեցողության դասեր տալ Խորեն Խրիմյանի (Մկրտիչ Խրիմյանի եղբոր որդի և հոգեորդի) դեռատի աղջիկներին՝ Կարինեին ու Սարինեին:

Ժամ. Կոմիտասի մասին, 1960, էջ 268:

Հոկտեմբեր 30, Էջմիածին- Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը իր ստորագրությամբ և «դրոշմամբ անվանական կնքո» վկայական է տալիս Կոմիտասին, 1894 թվականի սեպտեմբերի 11-ին արեղայական աստիճան ստանալու վերաբերյալ:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի Ֆ. 62:

Նոյեմբեր 16, Թիֆլիս- Գրաքննիչը տպագրության է թույլատրում Հ. Ճանիկյանի «Հնությունք Ակնա» գիրքը, որի վերջում գետեղված էր Կոմիտասի ձայնագրած (հայկական ձայնանիշերով) և Էջմիածնում տպագրված «Շար Ակնա ժողովրդական երգերի» վերնագրով հավելվածը (16 էջ):

Հ. Ճանիկյան, Հնությունք Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 502:

Նոյեմբեր 21, Երեկոյան, Էջմիածին- Մայր տաճարում Սողոմոն արկավազ Սողոմոնյանի կազմած քառաձայն երգաչափումբը Ճեմարանի սրահում կատարում է «Հայր մեր» շարականը: «Անպատճառ եկեք,- ասում է Սողոմոնը Ճեմարանի դասատու Աշոտ Աթանեսյանին,- եկեք և տեսեք աջողվե՞լ է արդյոք ինձ լավ խումբ կազմել»:

Ունկնդրության հրավիրված են լինում նաև ուսուցիչներ Մինաս Բերբերյանը, Նիկողայոս Քարամյանը, Սեթ Հարությունյանը, վերակացու Վահան Միրաքյանը և այլոք: «Արդթքի զանգը տվին,- շարունակում է Ա. Աթանեսյանը,- աշակերտները մի կերպ, մեծ դժկամությամբ ժողովվեցին և այն էլ ոչ բոլորը: Խմբական «Հայր մերը» սկսվեց և հենց մի քանի բառից հետո նրա մեղմ, հանդիսավոր և ինքնամփոփ հնչյունները միանգամից ստիպեցին բոլորին լռել, նաև նրանց, որոնք հեռվում կանգնած ինչ»որ վիճում էին հուզված: «Հայր մերի» թողած տպավորությունը հսկայական էր: Եթե դա աղոթք չլիներ, այլ կոնցերտ, անշուշտ դրան կհետևեին բուռն ծափահարություններ: Երբ ավարտվեց, մոտեցա Սողոմոն սարկավագին՝ շնորհավորելու համար:

- Այո, բայց դեռևս մի շաբթ պակասներ կան, և, բացի դա երգողներից շատերը ինչ»որ բանից հուզված են, իսկ դա ներգործում է ձայների վրա բացասաբար,- ասաց նա, սրա նրա երեսին նայելով»:

Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1967, էջ 336»337

Դեկտեմբեր 3, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի ԺԳ նիստում հրապարակվում է կաթողիկոսի հրամանը Ճեմարանում ծագած ուսանողական

խոռվության առիթով որոշ ուսուցիչներ արձակելու և նորերին նշանակելու մասին: «Ի տեղի Գևորգ սարկավազի» հրավիրվում է «հ. Կոմիտասս արեղան»:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 288, էջ 46:

Դեկտեմբեր 6, Էջմիածին- Տեսուչ Կ. Կոստանյանի, Կոմիտասի, Հ. Հովհաննիսյանի, Մ. Բերբերյանի, Քարամյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի ԺԴ նիստը:

Ժողովում քննարկվում է նոյեմբերի 24-ի խոռվությանը մասնակցած աշակերտներին Ճեմարանից հեռացնելու հարցը: Ժողովը որոշում է Ե դասարանից 11 աշակերտների (որոնց մեջ էր նաև երգիչ Արմենակ Շահ)Մուրադյանը) ճանաչել իբրև մեղսակիցներ և տեղափոխել Թիֆլիսի Ներսիսյան դպրոց:

Նույն տեղում, վավ. 289, թ. 47:

Դեկտեմբեր 9, Էջմիածին- Կոմիտասի, Մ. Բերբերյանի, Հ. Հովհաննիսյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի ԺԵ նիստը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 290, թ. 52:

Դեկտեմբեր 18, Էջմիածին- Խրիմյանի Թիֆլիս գնալու առիթով տրված ճաշկերույթի ժամանակ Խրիմյանին նվիրված կենաց բաժակից հետո «Ճեմարանի երգեցիկ խումբը բարեշնորհ հ. Կոմիտասի առաջնորդությամբ» երգում է «Տեր, կեցո դու զՀայս» մաղթանքը:

«Արարատ», 1894, No 12, էջ 387:

Դեկտեմբեր 19, Էջմիածին- Միաբանության անդամներն այցելում են վեհարան՝ «վեհափառ հայրապետի հրաժեշտի օրհնությունը առնելու: Ճեմարանի աշակերտների երգեցիկ խումբը Կոմիտաս արեղայի ղեկավարությամբ կատարում է «Հայրիկ, հայրիկ» սրտաշարժ երգը:

Նույն տեղում:

Նույն օրը, նույն տեղում- Էջմիածնից դեպի Երևան շարժվող կաթողիկոսական թափորի առջևից «...կառքով հայրապետական խաչն ու գավազանը տանում էին Եզնիկ և Կոմիտաս արեղաները»:

Նույն տեղում:

Նույն օրը, նույն տեղում- Թիֆլիս մեկնելուց առաջ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը No 2168 կոնդակով «Արարատ» ամսագրի խմբագիր է կարգում Նիկողայոս Քարամյանին՝ տալով նրան գործակից «զՅովհաննէս Յովհաննիսեան»:

Նույն տեղում, էջ 389:

Դեկտեմբեր 24, Էջմիածին- Կոմիտասի, Հ. Հովհաննիսյանի, Մ. Բերբերյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսումնա-

կան խորհրդի ԺՁ նիստը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 291, թ. 56:

Դեկտեմբեր 27, Էջմիածին- Կոմիտաս արեղա Սողոմոնյանը ձայնագրում է «Օն թինդի խինդ», «Հով արեք, սարեր ջան», «Լուսնական անուշ», «Նոր ա բացվել սարի լալեն» և «Զիմ գլխի ֆաթեն կիտամ» երգերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1649

Տարվա ընթացքում, Էջմիածին- Կարա»Մուրզայից հետո ստանձնելով Գևորգյան Ճեմարանում երգեցողության ուսուցչի պարտականությունը՝ Կոմիտաս վարդապետը սկսած 1893 թվականի վերջերից Ճեմարանի սաների մասնակցությամբ կազմակերպում է նաև երգչախումբ և հանդես է գալիս եկեղեցական ծեսերի ու տոնական օրերի ժամանակ: «Յընթացս տարույ համօրեն,- ասված է մեզ հասած վավերագրերից մեկում,- աշակերտեալք յաուրս եկեղեցական և կայսերական տօնից ևս և յամենայն կիրականուսու և յաուրս կիրակեից, համախմբեալք ընթանային յեկեղեցի, երգիչք դաս» դաս հերթակալութեամբ հանապազ զպաշտօնն կատարեին առաջնորդութեամբ հ. Կոմիտաս վարդապետի»:

«Էջմիածին», 1948, No 1-2, էջ 54:

1895

Հունվար 14, Էջմիածին- Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի անվանակոչության տոնի օրը վանքի սեղանատանը կազմակերպված ճաշկերույթի ընթացքում կենաց բաժակներից հետո երգում է Կոմիտաս արեղայի գլխավորած Ճեմարանի երգչախումբը:

«Արարատ», 1895, No 1, էջ 34:

Հունվար 17, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս արեղայի, Հ. Հովհաննիսյանի, Մ. Բերբերյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԺԷ նիստը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 292, թ. 57:

Հունվար, Թիֆլիս- «Հնությունք Ակնա» գրքի հեղինակ Հովսեփ Ճանիկյանը, ստանալով Խրիմյանի հանձնարարությունը, Կոմիտասի ձայնագրած Ակնա երգերի տետրը ուղարկում է Էջմիածին՝ հ. Կոմիտասին, որպեսզի վերջինս տեղում տպագրել տա այն: (Միայն Էջմիածնի տպարանն ուներ հայկական ձայնանիշերի ձուլածոներ):

Հ. Ճանիկյան, Հնությունք Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 502:

Հունվար 31, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում տեսուչ Կ. Կոստանյանի, Հ. Հովհաննիսյանի, Կոմիտաս արեղայի, Մ. Բերբերյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ու-

նենում ուսումնական խորհրդի ԺԸ նիստը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 293, թ. 60:

Փետրվար, առաջին կես- «Արարատ» ամսագրի հերթական համարում «Մայր Աթոռ» խորագրի տակ հրապարակվում է կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի Թիֆլիսից առաքած հեռագրի կոնդակը, ըստ որի, տպարանական ժողովի անդամ են նշանակվում «Բարեշնորհ Եզնիկ և Կոմիտաս արեղայք, որ պիտի գործեն նախագահությամբ գերապատիվ Արիստակես Եպիսկոպոս Դավթյանի:

«Արարատ», 1895, No 2, 70:

Փետրվար 24, Էջմիածին- Մկրտիչ կաթողիկոսը Մեսրոպ Սմբատյանին հատուկ գրությամբ պատվիրում է փետրվարի 26-ին այլոց հետ միասին վարդապետ ձեռնադրել Կոմիտաս արեղային:

ԲՀԱ, 1966, No 2, էջ 154:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 246, թ. 63:

Նույն օրը, նույն տեղում- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս արեղայի, Հ. Հովհաննիսյանի, Մ. Բերբերյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԺԹ նիստը:

Ժողովում լսվում է Ճեմարանի լսարանական բաժնին հանձնարարվող շարադրությունների հարցը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 294, թ. 62:

Փետրվար 26, Էջմիածին- Կոմիտաս, Կարապետ, Բենիկ, Եզնիկ և Թաղևոս արեղաներին Մկրտիչ Խրիմյանի հրամանով Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը Վաղարշապատի Ս. Աստվածածին եկեղեցում առավոտյան ժամերգությունից հետո Ղևոնդ վարդապետի վկայությամբ, հանդիսավոր արարողությամբ շնորհում է վարդապետական աստիճան և գավազան, միաժամանակ իրավունք է տալիս «քարոզել զբանս Աստծոյ յունկն ժողովրդոց, և ի կարեւոր դէպս ըստ առաքելոյն Պօղոսի սաստել, հանդիմանել, գատահակսն և զչարագործսն և ի զղջալին նոցա միխթարել և սփռփել...»:

«Արձագանք», Թիֆլիս, 1895, No 26, էջ 2:

«Արարատ», 1895, No 2, էջ 70:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., No 63:

Փետրվար 27, Վաղարշապատ- Մեսրոպ Սմբատյանը Կոմիտաս, Եզնիկ, Կարապետ, Բենիկ արեղաներին վարդապետական աստիճան շնորհելու հաջորդ օրը կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին հղած զեկուցագրի մեջ հաղորդում է, որ ձեռնադրության արարողությունը տեղի է ունեցել մեծ հանդիսավորությամբ: «Ի սէր և հարգանս նորընձա վարդապետաց,- գրում է Մ. Սմբատյանը,- փութացել էին անդ եկեղեցին Ճեմարանական, վարչական և ուսուցչական խումբն՝ հանդերձ ամենայն աշակերտօքն...»:

Բ.Հ.Ա. Ե., 1966, No 2, էջ 155:

Մարտ, Վաղարշապատ- «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է հաղորդագրություն Խրիմյանի կողմից No 115 կոնդակով տպարանական խորհրդի նախագահ և Արիստակես եպս. Դավթյանին, Կոմիտաս ու Եզնիկ աբեղաներին տպարանական ժողովի անդամ նշանակելու մասին:

«Արարատ», 1895, No 3, էջ 105:

Ապրիլ 18, Վաղարշապատ- Կոմիտաս վարդապետը «Արարատ» ամսագրում հրատարակելու նպատակով Արշակ Թաշճյանի խոսքերի հիման վրա հայկական ձայնանիշերով երկրորդ անգամ (առաջինը 1891 թ.) տպագրության է պատրաստում «Ազգային օրհներգ» վերնագրով խմբերգը (քառաձայն խմբի համար):

«Արարատ», 1895, No 4»ի հավելվածում:

ՉԱԳԱԹ, Սպ. Մելիքյանի ֆ.:

Կոմիտաս, ԵՇ, հ. չորրորդ, Ե., 1976, էջ 116:

Նոտագիր օրինակը «Էջմիածին», 1973, No 6, էջ 40:

Ապրիլ, Վաղարշապատ- «Արարատ» ամսագրի հերթական համարում, իբրև հավելված, հայկական ձայնանիշերով լույս է տեսնում Կոմիտաս վարդապետի «Ազգային օրհներգ» վերնագրով խմբերգի երկրորդ տպագրությունը (քառաձայն խմբի համար): Խոսք՝ Արշակ Թաշճյանի:

«Արարատ», 1895, No 4, հավելված:

Մայիս 3, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս վարդապետի, Ն. Հովհաննիսյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԻԲ նիստը:

Ժողովում քննարկվում են աշակերտների քննության, Ճեմարանը նոր կադրերով համարելու և այլևայլ հարցեր:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 295, թ. 63:

Մայիս 13, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս վարդապետի, Ն. Հովհաննիսյանի, Մ. Բերբերյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԻԳ նիստը:

Ժողովում լսվում է նոր ընդունվող աշակերտներից քննություն ընդունելու հարցը:

Նույն տեղում, վավ. 296, թ. 65:

Մայիս 15, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս և Կարապետ վարդապետների մասնակցությամբ տեղի է ունենում մանկավարժական խորհրդի ԻԴ նիստը:

Ժողովում լսվում է վարքից 4 ստացած խոտվարար Գրիգոր Վեհապետյանի հարցը:

Նույն տեղում, վավ. 297, թ. 67:

Մայիս 17, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս վարդապետի, Հ. Հովհաննիսյանի, Մ. Բերբերյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԻԾ նիստը:

Ժողովում լսվում է 5-րդ դասարանի աշակերտների վարքի գնահատականները նշանակելու հարցը:

Նույն տեղում, վավ. 298, թ. 69:

Մայիս 18, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի հանձնարարությամբ Կոմիտաս վարդապետը դպրոցական բաժնի «Եկեղեցական երգեցողություն» առարկայի համար կազմում է ուսումնական ծրագիր:

Եկեղեցական երգեցողություն

Վերջին երեք տարում եկեղեցական երաժշտության դասատվությունը Գևորգյան Ճեմարանում թերի է մնացել, որովհետև Գ և Դ դասարաններում ընդունվել են աշակերտներ, որոնցից ոմանք ավարտել են հայոց եկեղեցական ծխական երկդասյան դպրոցների դասընթացները լիովին, ոմանք կիսատ են թողել, իսկ ոմանք ոչ միայն չեն ավարտել այդ, այլև բնավ չեն ուսել, և այս տեսակներն ընդունված աշակերտների մեծագույն մասն է: Ուստի ուսուցիչն ստիպված է եղել և՛ Գ, և՛ Դ դասարաններում անցնել ծրագրի նախապատրաստությունը և ոչ իսկական դասընթացը:

Եթե աշակերտները հայոց եկեղեցական-ծխական երկդասյա դպրոցների ծրագրի մեջ նշանակված դասընթացքն անցած զան՝ տարրական գիտելիքները և ութն ձայն եղանակները, այն ժամանակ Գ դասարանում կարելի կլինի վերջացնել ութն ձայնի դարձվածքներն ու ստեղծիչները շաբաթական չորս դասով և Դ«ում՝ մեղեդիները, սրբասացությունները, տաղերը և գանձերը և համառոտ տեղեկություն երաժշտության մասին ընդհանրապես, շաբաթական երկու դասով: Կամ թե չէ, Գ դասարանում անցնել միայն ութն ձայնի դարձվածքները շաբաթական երեք դասով- Դ դասարանում ստեղծիչ եղանակները, մեղեդիները, սրբասացությունները, տաղերն ու գանձերը և համառոտ տեղեկություն երաժշտության մասին ընդհանրապես շաբաթական երեք դասով:

Ա. Տարերք ձայնագրության

1. Ձայնանիշեր. յոթնյակ
2. Ութնյակ (ութնյակների կազմությունը)
3. Տևողական նշաններ
4. Կիսաձայներ
5. Երաժշտական ձայների գորությունը
6. Ընդհարումներ

Բ. Եկեղեցական երգեցողություն

1. Եկեղեցական ութն ձայն եղանակներ (միջակ, չափավոր և պարզ ծանրները), կանոն, երգել և ձայնագրել:
2. Մուրբ պատարագի արարողություն (բացի մեղեդիներից, սրբասացություններ-

րից, տաղերից և գանձերից):

Դասագիրք

1. Բրուտյան Արշակի (միայն ութն ձայնի կանոնն ու օրինակներ):
2. Նիկողայոս Ս. Թաշճյանի (կանոնագիրք):

1895, մայիս 18, Կոմիտաս վարդապետ»:

ԲՀԱ, Ե., 1966, No 2, էջ 154:

Մայիս 27, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս վարդապետի, նկարիչ Եղիշե Թաղևոսյանի, Ս. Բերբերյանի, Վ. Աբովյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԻԶ նիստը:

Ժողովում լսվում է աշակերտների առաջադիմության մասին զեկուցագիրը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 299, թ. 71:

Մայիս 30, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս վարդապետի, Ե. Թաղևոսյանի, Կարապետ ու Եզնիկ վարդապետների և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԻԷ նիստը:

Ժողովում քննարկվում է Զ դասարանում տեղի ունեցած քննությունների արդյունքը:

Նույն տեղում, վավ. 300, թ. 75:

Մայիս 31, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս և Եզնիկ վարդապետների, Վ. Աբովյանի ու այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԻԸ նիստը:

Ժողովում լսվում է Գ լսարանի ուսանողներին ավարտական մրցանակագրեր տալու հարցը:

Նույն տեղում, վավ. 301, թ. 79:

Հունիս 4, Էջմիածին- Ս Էջմիածնի հիմնման հազար վեց հարյուր ամյակի տոնակատարության առիթով տեղի ունեցող հանդիսավոր պատարագի ժամանակ «գեղեցիկ ներդաշնակությամբ,- ասված է «Արարատ» ամսագրում,- երգում էր Ճեմարանի երգեցիկ խումբը՝ բարեշնորհ հայր Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ»:

«Արարատ», 1895, No 7, էջ 259:

Նույն օրը, երկրորդ կես, Էջմիածին- Վեհարանում տրված ճաշկերույթի ժամանակ Կոմիտասի գլխավորած երգչախումբը կատարում է «Էջ Միածինն ի Հօրե» շարականը և «Տէր, պահեա» ու «Տէր, կեցո» հիմներգերը:

Նույն տեղում

Հունիս 6, Էջմիածին- Կաթողիկոս Նրիմյանի բացակայության ընթացքում Կոմիտաս վարդապետը մի գրությամբ դիմում է տեղապահ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյան-

նին ու թույլտվություն է խնդրում ճեմարանի աշակերտների հետ Անի մեկնելու համար: «...Խոնարհաբար խնդրում եմ,- գրում է նա,- թույլատրել ինձ ճեմարանի աշակերտների հետ գնալ Անին տեսնել, որն և միևնույն ժամանակ ինձ համար կլինի ամառային օդափոխության միջոց: Ճեմարանի վարչությունը ամառն այստեղ մնացող աշակերտաց երկու խմբի բաժանեց, որոնցից մեկի առաջնորդողը ես պիտի լինեմ: Ուստի խնդրեմ Ձեր բարձր սրբազանության տնօրինությունը»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 166:

Հունիս 7, Պետերբուրգ- Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, ավելի վաղ ընդառաջելով Վրաստանի և Իմերեթիայի թեմական առաջնորդ Գևորգ Մուրենյանցի միջնորդությունը, շրջագայության ընթացքում, Պետերբուրգում եղած ժամանակ, No 325 կոնդակով թույլատրում է Մակար Եկմալյանին Պատարագի տպագրությունը և կատարումը Հայոց Առաքելական Եկեղեցում: «... Այսու կոնդակաւ թույլ տամք,- ասված է «Արարատ» ամսագրում,- քեզ պսակել զաշխատութիւն քու առ ի կիտ արկանել յեկեղեցիս մեր եւ ջերմեռանդ ազգայինս, զի բարերարաց ձեռնատուրթեամբ օժանդակ լիցին քեզ...»:

«Նոր դար», 1895, No 113:

«Արարատ», 1895, No 8, էջ 316.:

Նույն օրը, Վաղարշապատ- «Նոր դար» լրագրի հերթական համարի «Քրոնիկոն» բաժնում ըստ Էջմիածնից ստացված տեղեկության հայտնի է դառնում, որ «Հունիսի 7-ին Գևորգյան ճեմարանի մի խումբ աշակերտներ և ուսանողներ բարեջնորհ Կոմիտաս վարդապետի առաջնորդությամբ գնացել են Հառիճ, Անի, Ալեքսանդրապոլ, Կարս, Կաղզվան, Կողբ և այլ տեղեր՝ ոտով շրջելու»:

«Նոր դար», 1895, No 105:

Հունիս [12-16], Անի- Գևորգյան ճեմարանի սաների հետ Անիում գտնվող Կոմիտաս վարդապետը Մայր տաճարում երգեցիկ խմբի մասնակցությամբ կազմակերպում է «Պատարագի երգեցիկ մասի արարողություն»: Ճեմարանի դասախոս Հակոբ Մանանդյանը ներկա լինելով այդ արարողությանը՝ հետագայում իր եղբորը պատմել է հետևյալը. «Թե՛ ռուսական կենտրոններում, և թե՛ արտասահմանի մայրաքաղաքային օպերաներում լսել է առաջնակարգ երգիչների և խմբերի համերգներ, սակայն այդպիսի երգեցողություն, որը վիճակված է եղել իրեն լսել Անիի Մայր տաճարում, Կոմիտասի ղեկավարությամբ, նա ոչ մի տեղ չի լսել»:

«Էջմիածին», 1957, No2-3, էջ 68:

Հունիս 15, Թիֆլիս- «Նոր դար» լրագրի հերթական համարի «Քրոնիկոն» բաժնում հրապարակվում է Էջմիածնից ստացված հաղորդագրություն այն մասին, որ Կոմիտաս վարդապետի առաջնորդությամբ ճեմարանի աշակերտները և ուսանողները մեկնել են Հառիճ, Անի, Ալեքսանդրապոլ, Կարս, Կաղզվան, Կողբ և այլ տեղեր շրջագայելու:

«Նոր դար», 1895, No 105:

Հունիս 18, Ալեքսանդրապոլ- Ըստ «Նոր դարում» հրապարակած հաղորդագրության՝ Կոմիտաս վարդապետը, որ «...ճանապարհորդելով Անի գտնվում էր Ալեքսանդրապոլում, կիրակի, հունիսի 18-ին Ս. Աստվածածնա եկեղեցում քարոզ է խոսել»:

Ասված է նաև, որ Ճեմարանի սաները Կոմիտասի ղեկավարությամբ երգել են պատարագի ընթացքում:

«Նոր դար», 1895, No 111:

Հունիս 24, Թիֆլիս- «Նոր դար» լրագրի հերթական համարի «Քրոնիկոն» բաժնում հրապարակվում է տեղեկություն նվիրված Կոմիտաս վարդապետի դեպի Անի կատարած ուղևորության ընթացքում հունիսի 18-ին Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին եկեղեցում տված քարոզի մասին:

Ասված է նաև, որ Ճեմարանի սաները Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ մասնակցել են Ս. Պատարագի արարողությանը:

«Նոր դար», 1895, No 111:

Հուլիս 20, Վաղարշապատ- Յոթամյա բացակայությունից հետո Ամենայն Հայոց Մկրտիչ Ա. Կաթողիկոսը վերադառնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

«Արարատ», 1895, No 8, էջ 306:

Հուլիս 25, Էջմիածին- Կոմիտասը մի նամակով դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին: Խոսելով յոթ տարիների ընթացքում իր հավաքած երգերի ու պարերգերի մասին և արժեվորելով դրանք՝ Կոմիտասը Խրիմյանին խնդրում է միջոցներ տրամադրել և հզոր բազկով աջակցել փրկելու համար այն գանձերը, որոնք թաղված են մնում անհայտության մեջ: Կոմիտասը իր նամակում անհրաժեշտ է համարում Վեհափառին տեղյակ պահել, որ «... ժողովրդական եղանակսն Հայոց իբրև զծիր իմն կարմիր նկատեն առընչութիւնք սոցա եղանակաց շարականաց»: Վերջում Կոմիտասը թույլտվություն է խնդրում տպագրելու «գանգին գանձս, զոր աւանդեալ է մեզ բազմահարուստ հանճարոյ նախնեաց մերոց»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 74-75:

Օգոստոս 21, Էջմիածին- Մայր Աթոռում Կոմիտասի անվան շուրջը ծավալվող բանասարկություններն ու սաղրանքները շուտով հայտնի են դառնում նաև իրեն:

Մեծ անհանգստություն, հուզմունք ու վրդովմունք ապրող Կոմիտասը որոշում է հրաժարվել Ճեմարանում զբաղեցրած պաշտոնից և գրին է հանձնում տեսուչ Կարապետ Կոստանյանին ուղղված իր «հրաժարման գիրը»:

Գրության հանձնումը, սակայն, ինչ-ինչ նկատառումով չի իրականացվում (տե՛ս օգոստոսի 28-ի գրառումը):

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., No 16:

Օգոստոս 28, Էջմիածին- Կոմիտասը նամակ է գրում Գևորգյան Ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին: Կոմիտասը վերջինիս բողոքում է վանական միջավայրում

իր մասին տարածած զրպարտչական լուրերի համար:

Կ. Կոստանյանին կարգելով դատավոր՝ Կոմիտասը խնդրում է նրան քննել իր գործը և մեջտեղ հանել ճշմարտությունը: «Վայ ինձ,- գրում է նա,- ավստո իմ երիտասարդ հասակիս, մեղք իմ ծաղիկ եռանդիս. ես արդեն խելագարվում եմ, ես զժվում եմ, բայց անօգուտ, ով է ինձ օգնողը, ամենքը երես են շուռ տվել, ամենքը խոժոռ հայացք են ձգում, ամենքը կարծում են կամ հավատացած են, որ ես լիբբ եմ, անամոթ կամ կարող եմ լինել»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 76-78:

Նույն օրը, Էջմիածին- Կոմիտասը Գևորգյան Ճեմարանի տեսուչ Կ. Կոստանյանին է ներկայացնում Ճեմարանում իր ստանձնած պարտավորությունից հրաժարվելու վերաբերյալ զեկուցագիրը՝ «Հրաժարուն գիրը», «Խնդրեմ ի խոնարհ ի Ձենջ հեռացուցանել յոր և է գործոց Ճեմարանականաց ընդ յոր ոյր վասն առաքեմ առ Մեծապատիւ Տեսուչդ Գ. Հ. Ճեմարանի գայս գիրը հրաժարման, ընկալարուք զդա:

Խ. Ծ. Կոմիտաս վարդապետ»:

Նույն տեղում, էջ 79:

Նույն օրը, Էջմիածին- Կոմիտասը վերոհիշյալ «Հրաժարուն գրի» հետ Ճեմարանի տեսուչ Կ. Կոստանյանին է ուղարկում «ռոյալի բանալին»:

ՉԱԳԱԹ, Կ. Կոստանյանի ֆ., No 1087:

Օգոստոսի վերջ, Էջմիածին- Խմբագրելուց հետո Կոմիտասը տպարան է հանձնում Հ. Ճանիկյանի «Հնությունք Ակնա» գրքի համար հավելված հանդիսացող «Շար Ակնա ժողովրդական երգերի» խորագրով տետրը (25 երգ):

Հ. Ճանիկյան, Հնությունք Ակնա, 1895, էջ 502:

[Սեպտեմբեր, երկրորդ կես], Էջմիածին- Կոմիտաս վարդապետը, ցանկանալով որևէ զբաղմունք գտնել Պետերբուրգում, նամակով դիմում է այդ քաղաքի հոգևոր խորհրդի անդամ Տիրայր վարդապետին և խնդրում է նրան տեղում որևէ աշխատանք գտնել իր համար:

«Տեղեկագիր», ԳԱ, 1959, No 9, էջ 105:

Սեպտեմբեր 21, Էջմիածին- Մեարոպ արքեպիսկոպոս Սմբատյանի ստորագրությամբ և «դրոշմամբ անվանական կնքո» «վկայական» է տրվում Կոմիտաս Սողոմոնյանին 1895 թվականի փետրվարի 26-ին վարդապետական աստիճան ստացած լինելու մասին:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., No 63:

Սեպտեմբեր 23, Վաղարշապատ- Գևորգյան Ճեմարանում Կ. Կոստանյանի, Կոմիտաս վարդապետի, Հ. Հովհաննիսյանի, Մտ. Կանայանի, Հուսիկ և Կարապետ վարդապետների և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի Բ նիստը: Ժողովում լսվում է շաբաթ օրը Ճեմարանի տարեդարձը տոնելու մասին հարցը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 303, թ. 3:

Սեպտեմբեր 30, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանի տարեդարձի տոնակատարության առիթով հանդիսավոր պատարագի ընթացքում ելույթ է ունենում «Բարեշնորհ Կոմիտաս վարդապետի» ղեկավարած Ճեմարանի երգչախումբը:

«Արարատ», 1895, No 9, էջ 363:

Նույն օրը, Էջմիածին- Պատարագից հետո Ճեմարանի գավիթում տեղի է ունենում ուսումնական խորհրդի վարչության հրապարակային հաշվետվություն: Տեսուչ Կ. Կոստանյանի Բանախոսությունից հետո Կոմիտասի ղեկավարած երգեցիկ խումբը կատարում է «Ոհ, ինչ չքնաղ» օրհներգը, տոնական հանդեսը ավարտվում է «Տէր, կեցո» երգով:

Նույն տեղում:

Հոկտեմբեր 1, Վաղարշապատ- Վարագա Ս. Խաչի տոնակատարության օրը Մայր Աթոռում հանդիսավորությամբ նշվում է կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի օծման տարեդարձը:

Վանքի սեղանատանը տրվում է հանդիսավոր ճաշկերույթ, որի ընթացքում երգում է Կոմիտաս վարդապետի ղեկավարած Ճեմարանի երգչախումբը:

«Արարատ», 1895, No 9, էջ 362:

Հոկտեմբեր [2-3], Էջմիածին- Երաժշտական կրթություն ստանալու նպատակով Կոմիտաս վարդապետը մեկնում է Թիֆլիս:

«Սովետական արվեստ», 1962, No 9, էջ 51:

Հնարավոր է, որ Կոմիտասն իր հետ Էջմիածնից Թիֆլիս է տարել նաև Հ. Ճանիկյանի «Հնությունք Ակնա» գրքի համար իբրև հավելված Էջմիածնում տպագրված «Շար Ակնա ժողովրդական երգերի» խորագրով պրակը (ձայնագրությունը Կոմիտաս վարդապետի, 16 էջ (600 օրինակ):

Հոկտեմբեր [3-5], Թիֆլիս- Կոմիտասին Գևորգ արքեպիսկոպոսի հրամանով սենյակ են հատկացնում Առաջնորդարանում:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 79:

Հոկտեմբեր [5-7], Թիֆլիս- Կոմիտասը հանդիպում է Մ. Եկմալյանին, խորհրդակցում է նրա հետ երաժշտական դպրոցում կամ կոնսերվատորիայում սովորելու մասին: Եկմալյանը նրան խորհուրդ չի տալիս կոնսերվատորիա ընդունվել և հանձն է առնում հետը երաժշտության տեսություն պարապել:

Նույն տեղում:

Հոկտեմբեր [6-8], Թիֆլիս- Կոմիտասը նամակ է գրում Էջմիածնի միաբանության անդամ Հուսիկ վարդապետ Զոհրաբյանին: Նամակը հայտնի չէ:

Նույն տեղում:

Հոկտեմբեր 9, Էջմիածին- Կոմիտասը նամակ է գրում Էջմիածին, Ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին և խնդրում է վերջինիս օգտագործման համար Ճեմարանի

մատենադարանից իրեն ուղարկել Fetjs»ի «Histoire generale dela musique» գրքի հինգ հատորյակը: Միաժամանակ հայտնվում է, որ Եկմայանն իրեն խորհուրդ չի տվել կոնսերվատորիա մտնել, իսկ երաժշտական դպրոցում սովորելը նա համարել է անիմաստ: Եկմայանը այս ամենի հետ մեկտեղ խոստացել է երաժշտության տեսություն պարապել Կոմիտասի հետ: «Առհասարակ, գրում է Կոմիտասը, խորհուրդ են տալիս տեսությունը սովորել Եկմայանի մոտ»:

Նույն տեղում:

Հոկտեմբեր 14, Պետերբուրգ- Տիրայր վարդապետը մտերիմ քահանաներից մեկի միջոցով Կոմիտասի հարցմանը տվել է հետևյալ պատասխանը. «... Կոմիտասը գրել էր, որ այստեղ իմանամ իր համար, թե չի՞ կարող գալ: Գալը շատ դժվար է, որովհետև այնքան ռոճիկ չեն տա: Կա մի ելք: Եկող տարի Եկմայանը այստեղի եկեղեցու համար պետք է պատրաստած բերի 6 երգիչ և մի կառավարիչ: Ահա այդ կառավարիչը կարող է լինել Սողոմոնը: Ամսենն ստանալով ամենաշատը 50-60 ռ., եթե թողնեն նորան այստեղ գալ, իսկ այլ հնար չկա: Այնպես որ, եթե ուզում է այդ պայմանը, այս ձմեռ պիտի գնա Տիֆլիս, կամ գարնանը, որ իր կառավարչության գործի հետ ծանոթանա Եկմայանի և նրա խմբի հետ, և նոցա հետ գալ մայիսին: Խորհեցեք, տեսեք»:

«Տեղեկագիրք», 1959, No 9, էջ 105:

Հոկտեմբեր, առաջին կես, Էջմիածին- Գևորգյան Ճեմարանի 1895/1896 ուս. տարվա դասաժամերի ցուցակի ծանոթության մեջ Կոմիտասի անվան դիմաց գրվում է. «Դադարեալ ի հոկտեմբեր ամսոյ»:

ԲՀԱ, 1966, No 2, էջ 157:

Հոկտեմբեր 23, Էջմիածին- Ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանը նամակ է գրում Թիֆլիսում Եկմայանի մոտ սովորող Կոմիտաս վարդապետին: Նամակի ինչ և ուր լինելը հայտնի չէ:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 80:

Հոկտեմբեր [10-28], Թիֆլիս- Կոմիտասը գալով Թիֆլիս և հանդիպելով նյութական դժվարության՝ նամակով դիմում է կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին (Հայրիկին): Նամակը չի պահպանվել:

Նույն տեղում:

Հոկտեմբեր 30, Թիֆլիս- Կոմիտասը նամակ է գրում Կարապետ Կոստանյանին: «Ես,- գրում է նա,- արդեն սկսել եմ կանոնավոր պարապմունք: Բնակվում եմ Ս. Մարգարտում հ. Համազասպի մոտ, ապրուստս շատ լավ է: Ամբողջ օրը տանն եմ լինում և քաղաք իջնում եմ միայն դասեր առնելու համար: Առայժմ սովորում եմ պ. Մակար Եկմայանի մոտ, ճրիաբար երաժշտության ներդաշնակության տեսությունը և գործադրությունը, որն և լրապես կամբողջացնեմ մինչև մայիս ամսի վերջը: Մինչև հունվար զբաղմունքս կլինի բացառապես ներդաշնակության գործնական և տեսական մասը, իսկ հե-

տո նվագածություն այնքան, որքան անհրաժեշտ կլինի ներդաշնակության և երգեցողության համար և երգեցողություն, որն այնքան ժամանակ չպետք է իլե ինձանից, ըստ որում ինձ պետք է ևեթ զործնականը և որպեսզի նախապատրաստվեմ, հաճախում եմ Ներսիսյան դպրոցի խմբական երգեցողության ժամերին, որ ամեն օր կա, հմտանում դեկավարության ձևին, ձայնը կրթելու և ամրացնելու, խմբերի բաժանելու եղանակին: Խումբը դպրոցում դեկավարում է ինքը՝ Եկմայանը: Առհասարակ թե նվագածության և թե երգեցողության համար դասագին պահանջում են 3-ական մանեթ, եթե յուրաքանչյուրից շաբաթական 2 դաս առնեմ ամսական բավական փող է նստում, բացի piano-ի ամսավճարը՝ 8 մանեթ: Չեմ իմանում փողի կողմից ինչ պետք է կարգադրվի ինձ համար: Իմ ամսական ռոճիկս հազիվ բավական է կառքի, գրքի և թերթի վճարին: Նույնպես դեռ ձմեռվա շորեր չունեմ, փող էլ չունեմ: Հայրիկին գրել եմ: Խնդրեմ դուք ևս Ձեր կողմից հասկացրեք, որ ուսման ծախքի վճարը դյուրանա, ստանալու տեղը, ժամանակը որոշ լինի, որ ես կարող լինեմ ևեթ ուշքս ուսման վրա»:

Նույն տեղում, էջ 80-81:

Հոկտեմբեր « դեկտեմբեր, Թիֆլիս- Կոմիտասը հաճախում է Ներսիսյան դպրոց և մասնակցում է «Խմբական երգեցողության ժամերին, որպեսզի հմտանա դեկավարման ձևերին, ձայնը կրթելու և ամրացնելու, խմբերի բաժանելու եղանակին»:

Նույն տեղում:

Նոյեմբեր 11, Թիֆլիս- «Նոր դար» լրագրի հերթական համարի «Քրոնիկոն» բաժնում էջմիածնից ստացված տեղեկության հիման վրա հաղորդվում է. «Արժ. Կոմիտաս վարդապետը Թիֆլիս ուղևորվելով նրա առարկան մինչև այժմ բաց է մնացել...»:

«Նոր դար», 1895, No 200:

Նոյեմբեր 24, Թիֆլիս- Կոմիտասը գրախանութից գնում է Ա. Արենսկու " Краткое руководство к практическому гармонии"(1891), Նիլսոն Սալոմանի „Школа пения“, Ա. Կազբիրյուկի "Руководство к практическому изучению гармонии" (հկր 1883), Վ. Մ. Օռլովի "искусство церковного пения" (հկր 1894), Ռիմսկի Կոբսակովի "Практический учебник гармонии" (հկր 1891), Լ. Սակկետտիի "Очерк всеобщей истории музыки" (հկր 1891), Է. ֆ. Ռիխտերի "Учебник гармонии" (հկր 1876) և Բորոդինիի «Չայնավարություններ» գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 869, 824, 907, 910, 897, 909, 908, 1281:

Դեկտեմբեր 5, Թիֆլիս- Կառավարչապետի գրասենյակից հայտնում են Թիֆլիսի նահանգապետին այն մասին, որ «տեղեկությունների համաձայն հայկական ազիտացիային մասնակցելու մեջ կասկածվել են իմիջիայոց Թիֆլիսի հայկական հոգևոր սեմինարիայի (Ներսիսյան դպրոցի Խ. Ս.) ուսուցիչ Լևոն Մանվելյանը և Կոմիտաս վարդապետ Սողոմոնյանը Թիֆլիսում»:

Վահե Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Ե., 1970, էջ 191:

Դեկտեմբեր 12, Թիֆլիս- «Նոր դար» լրագրի հերթական համարի «Քրոնիկոն» բաժնում Էջմիածնից ստացված հաղորդագրության մեջ ասված է. «Արժ. հայր Կոմիտասի Թիֆլիս գալուց հետո կանոնավոր երգեցողություն երբեք չենք լսել, գոնե Ս. Էջմիածնում լինե՞ր մի կանոնավոր երգեցիկ խումբ, բայց, ինչպես լսում ենք, հայր Կոմիտասի հեռանալուց հետո երգեցողության» ձայնագրության ուսուցիչ չլինելու պատճառով այդ կարևոր առարկան չի ավանդվում ճեմարանում»:

«Նոր դար», 1895, No 218:

Դեկտեմբեր [22-26], Թիֆլիս- Լույս է տեսնում Հ. Ճանիկյանի «Հնությունք Ակնա» գիրքը, որի վերջում զետեղված էր Կոմիտասի ձայնագրած և Էջմիածնի տպարանում հրատարակված «Շար Ակնա ժողովրդական երգերի» վերնագրով հավելվածը (16 էջ):

Բովանդ. 1. Օրոր, 2. Հարսանեկան երգ, 3. Քաշհարեն» հարսանեկան, 4. Հարսանեկան երգ հինայի, 5. Հարսանեկան երգ աղջիկ տանելուն, 6. Հարսանեկան. հարսն ու թագավորը երբ տուն կժամանեն, 7. Ակնա նվագածուների երգածը, 8. Պարերգ բարեկենդանի ու զատկի, 9. Անտունի, 10. Հին երգ, 11. Հին երգ, 12. Արուգելի աղզը ալեկեղզլի, 13. Ձորակ աղզը, 14. Թխման աղզը, 15. Երգ դարիբի, 16. Համբարձման, 17. Խմբերգ, 18. Հին երգ թևախաղի, 19. Ծանր թևախաղ, 20. Արագ պարերգ, 21. Արագ պարերգ, 22. Արագ թևախաղ, 23. Արագ թևախաղ, 24. Արագ թևախաղ, 25. Արագ թևախաղ, 26. Ճոր պար, 27. Ողբ:

Ծանոթ. Այս երգերից No 12, 13 և 14»-ը ձայնագրել է Գր. Էֆ. Մեհտիրյանը:

Հ. Ճանիկյան, Հնությունք Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 500-516:

«Մշակ», 1895, No 149, էջ 3:

Դեկտեմբեր, Թիֆլիս- «Մուրճ» ամսագրի հերթական համարում «Զանազան լուրեր» վերնագրի տակ հրատարակվում է հաղորդագրություն հ. Հովսեփի Ճանիկյանի «Հնությունք Ակնա» գրքի լույս տեսնելու մասին: Այդ գրքի հավելվածում զետեղված «Շար Ակնա ժողովրդական երգերի» ձայնագրությունը կատարել է «Կոմիտաս վարդապետ Մոդոնյանը»:

«Մուրճ», 1895, No 12, էջ 1704:

1896

Փետրվար 20, Թիֆլիս- Կոմիտասը լուսանկարվում է Գ. Բաբալովի կողմից վարդապետական զգեստով:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 165, «Էջմիածին», 1962, No 2, էջ 49:

Նույն օրը, Թիֆլիս- Կոմիտասը լուսանկարվում է Գ. Բաբալովի կողմից առանց վեղարի՝ աշխարհական զգեստով:

Նույն տեղում 178:

Մարտ 24, Թիֆլիս- Կոմիտաս վարդապետի մասնակցությամբ վանքի եկեղեցում տեղի է ունենում հանդիսավոր պատարագ: Արարողությանը հիացողների թվում ներկա է լինում նաև մեծահարուստ բարերար Ալեքսանդր Մանթաշյանը: «Կոմիտասի ձայնը, - գրում է Հուսիկ եպիսկոպոս Զոհրաբյանը, - երգեցողությունը այն աստիճան դյուրական կերևան Մանթաշյանին, որ դյուրված անոր երգեցողությամբ կը հետաքրքրվի իմանալ, թե ով է այդ երիտասարդ վարդապետը: Մանթաշյանը կը հրավիրե երգիլ վարդապետին իր տունը և իր համակրությունը և շնորհակալությունը հայտնելէ վերջը կը հայտարարե, թե Կոմիտաս իր սանն է, թե ինքը պատրաստ է անոր բարձրագույն երաժշտական կրթության ծախքը սիրով հոգալ»:

«Նավասարդ», Պուքրել, 1926, Բ տարի, թ. պրակ, էջ 268:

Ապրիլ 12, Թիֆլիս- Կոմիտասը Գերմանիա մեկնելուց առաջ իր լուսանկարը «Հարգելի պր. Հովհաննես Հովհաննիսյանին, 1896, 12/դ, Տփլիս» մակագրությամբ ուղարկում է Վաղարշապատ վերջինիս:

Թարգմանչուհի Լ. Տեր»Մինասյանի անձնական արխիվ:

Նույն օրը, Թիֆլիս- Կոմիտասը իր Ֆարինայի երաժշտական գրախանութից գնում է Ի. Կ. Լոբեի «ՕցցօՍՈսՖվօտ ՍՈՑպլՈւջՈր» վերնագրով գրքույկը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 915:

Ապրիլ 15, Թիֆլիս- Կոմիտասը իր լուսանկարը «Արժանապատիվ Տեր»Գյուտ քահանա Աղայանց եղբայրական հիշատակ, 1896, 15/դ Տփլիս» մակագրությամբ նվիրում է վերջինիս:

ՉԱԳԱԹ, գրական հուշարձանային ենթաբաժին, Կոմիտասի ֆ. 18:

Ապրիլ, առաջին կես, Էջմիածին- Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, տեղեկանալով, որ մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանը ցանկություն է հայտնել հոգալու Կոմիտասի Գերմանիայում իրականացվող ուսումնառության ծախսերը, նրան Թիֆլիսից հեռագրով կանչում է Էջմիածին:

Ապրիլ 19, Թիֆլիս- Ստանալով կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հեռագիրը՝ Կոմիտաս վարդապետը մեկնում է Վաղարշապատ:

«Նոր դար», 1896, No 70:

Ապրիլ 20, Թիֆլիս- «Նոր դար» լրագրի հերթական համարի «Քրոնիկոն» բաժնում հրապարակվում է հաղորդագրություն Կոմիտաս վարդապետի Վաղարշապատ մեկնելու վերաբերյալ: «Բարեշնորհ Կոմիտաս վարդապետ Սողոմոնյանը, - ասված է հաղորդագրության մեջ, - որ աշունքվանից գտնվում էր Թիֆլիսում և պարապում էր երաժշտության ուսումնասիրությամբ, ապրիլի 19-ին ճանապարհվեց դեպի Ս. Էջմիածին Վեհափառ հայրապետի հեռագրի համաձայն»:

«Նոր դար», 1896, No 70:

Ապրիլ [21-22], Վաղարշապատ- Թիֆլիսից Էջմիածին եկած Կոմիտասը ներկայանում է կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին: «Երբ Էջմիածին վերադարձա, - հայտնում է Կոմիտասը, - և խնդրագիրս մատուցի Հայրիկին, գոհ եղավ և հրամայեց, որ երթամ Մանթաշյանի ստորագրությունը բերեմ»:

Թերլեզյան Ռուբեն, Կոմիտաս, Ե., 1992, էջ 15:

Ապրիլ 25, Էջմիածին- Կոմիտասի միջոցով ստանալով հավաստիացում, որ Ալ. Մանթաշյանը խոստացել է հոգալ Գերմանիայում իր կրթության հետ կապված ծախսերը, կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը No 634 կոնդակով օրհնության գիր է շնորհում Ալ. Մանթաշյանին:

ՀՀՊԿՊԱ, ֆ. No 56, տնտեսական բաժին, գ. No 286, թ. 15: (սևագիր օրինակ):

Ապրիլ 25, Վաղարշապատ- Կոմիտասը դիմում է Ճեմարանի վարչությանը և խնդրում, որ ապահովեն իրեն Ճեմարանը ավարտած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթով: «1892-93 ուսումնական տարեշրջանում, ավարտեցի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, բայց ցարդ մրցանակագիրս (դիպլոմ) չեմ ստացել, խոնարհաբար խնդրում եմ տնօրինել»:

«Տեղեկագիր», 1956, No 9, էջ 106:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 6:

[Ապրիլ 25-26], Էջմիածին- Ընդառաջելով Կոմիտասի 25-ը ապրիլի խնդրագրին, Ճեմարանի վարչությունը լրացնում և նրան է հանձնում 1892-93 ուս. տարում Ճեմարանի լսարանական բաժինը ավարտած լինելու վերաբերյալ վկայական լրացված հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 6:

[Ապրիլ 25-26], Էջմիածին- Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը հանձնարարում է Կոմիտասին մեկնել Թիֆլիս, Ալ. Մանթաշյանին հանձնել Օրհնության կոնդակը և բերել նրա գրավոր համաձայնությունը ուսման ծախքը հոգալու վերաբերյալ:

ԲՀԱ, 1966, No 2, էջ 149-171:

[Ապրիլ 26-27], Թիֆլիս- Կոմիտաս վարդապետը այցելում է Ալեքսանդր Մանթաշյանին, նրան է հանձնում կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կոնդակով շնորհված «Օրհնության գիրը»: Կոմիտասը միաժամանակ հայտնում է Մանթաշյանին, որ կաթողիկոսը ցանկանում է ունենալ նրա գրավոր համաձայնությունը իր ուսումնառության ծախքը վճարելու վերաբերյալ:

Ստանալով «Օրհնության գիրը» և լսելով կաթողիկոսի հանձնարարականի մասին, Մանթաշյանը մի պահ խորհելուց հետո դիմում է Կոմիտասին. «Վարդապետ, - ասում է նա, - այդ ամենը լավ, բայց կվախնամ, որ երբ Պերլին երթաս գերման գեղուհիները սքեմդ իլեն վրայեդ: Այդ կասկածը,- շարունակում է Կոմիտասը, - ծանր եկավ ինձ: Խնդրելով, որ չվշտանա խոսքերես պատասխանեցի իրեն. «Իր ուխտին ու կոչումին անհաստատ կրոնավորի մը սքեմդ իլելու համար հարկ չկա անպայման գերման գեղուհիներու. անոնցմե ամեն տեղ կը գտնվին: Համոզվեցեք,- ավելացնում է Կոմիտասը, - որ

միակ իդեալն է կատարելագործել երաժշտական ուսումնառումը և հավատարմորեն ծառայել ազգիս և եկեղեցիս»:

Այս խոսակցությունից հետո Մանթաշյանը տալիս է իր համաձայնությունը. «Գնա վարդապետ,- ասում է նա,- այսօրվնե իմն ես, առ աս ստորագրությունս, տար Հայրիկին և ես կսպասեմ համերգներուդ»:

Թ. Ազատյան, Կոմիտաս վարդապետ,
Կ. Պոլիս, 1931, էջ 21-22:

Նույն օրը, Թիֆլիս- Կոմիտասի հետ վարած գրույցի ընթացքում Մանթաշյանը նրան հայտնում է, որ Եվրոպայում երեք տարի սովորելու համար նրան հատկացնելու է յուրաքանչյուր տարվա համար «400 մանեթ»:

Կոմիտասը առարկում է. «... միայն աներեսությամբ,- գրում է նա,- կարողացա 600-ի վճիռը ստանալ»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 86:

Ապրիլ [27-28], Թիֆլիս- Գալով Էջմիածին, Կոմիտաս վարդապետը մի նոր գրություն է ուղղում վեհի անունով և «Մանթաշյանի հավանության գրի հետ» հանձնում է Մայր Աթոռի դիվանապետին:

Թ. Ազատյան, Կոմիտաս վարդապետ, առաջին հատոր,
Կ. Պոլիս, 1931, էջ 21-22:

Ապրիլ [29-30], Վաղարշապատ- Սկրտիչ Խրիմյանը վեհարանում ընդունում է Կոմիտասին ու դիվանապետին: Վերջինս կաթողիկոսին է ներկայացնում Կոմիտասի աղերսագիրն ու Մանթաշյանի տված ստորագրությունը:

Երբ Խրիմյանը ավարտում է գրության ընթերցումը, Կոմիտասը «...առանց վայրկյան մը սպասելու,- հետագայում պատմել է նա Ջ. Մխիթարյանին,- վերարկուիս տակ պահած գրիչս վեր բարձրացուցի: Վեհափառը երբ իմ այդ փութկոտ ընթացքս տեսավ «կոռիք խայտառակ, ուրկե առիք այդ համարձակությունը» պոռաց: Վեղարը ձեռքս շանթահար ու գլխիկոր, սկսա ետ»ետ նահանջել: Վեհարանի դուռը հագիվ հասած «կաց այդ տեղ» ըսավ և հրամայեց, որ իրեն մոտենամ: Դարձյալ ծնրադրեցի իր առջև, առավ գրիչս և անով մակագրելե վերջ աղերսագիրս, ըսավ գորովոտ ձայնով մը. «Առ և գնա. այդ համարձակությունն ու կամքը երաժշտական ասպարեզիդ մեջ ունեցիր»:

Թ. Ազատյան, Կոմիտաս վարդապետ, առաջին հատոր,
Կ. Պոլիս, 1931, էջ 29:

Ապրիլ, Վաղարշապատ- «Արարատ» ամսագրի հերթական համարում «Ճեմարան» ենթավերնագրի տակ հրապարակվում է հաղորդագրություն Կոմիտաս վարդապետի Ալ. Մանթաշյանի ծախքով Գերմանիա գնալու և այնտեղ երաժշտական կրթություն ստանալու վերաբերյալ: «Կոմիտաս վարդապետը,- ասված է ամսագրում,- որ երգեցողության ուսուցիչ էր ճեմարանում, անցյալ տարի և այս տարի Թիֆլիսում պ. Եկմայանին էր աշակերտում, իրավունք ստացավ Նորին Վեհափառությունից արտասահման գնալու և երաժշտական ար-

վեստում կատարելագործվելու: Հայր Կոմիտաս վարդապետի ուսման ծախքն հոգալ խոստացել է հայտնի բարեգործ պ. Ալեքսանդր Մանթաշյանը, որին այդ առիթով ազգիս վեհափառ կաթողիկոսն յուր առաքելական օրհնությունն հաճեցավ տալ հատուկ կոնդակով»:

«Արարատ» 1896, No 4, էջ 189:

Մայիս 8, Թիֆլիս- Մարիամ Գասպարյանը իր լուսանկարը «Խորին յարգանաց հիշատակ Կոմիտաս վարդապետին մայրական հարգանքով» նվիրում է նրան:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ. 1497:

Նույն օրը, Թիֆլիս- «Նոր դար» լրագրի հերթական համարում հրապարակվում է հաղորդագրություն, որ Հուսիկ և Կոմիտաս վարդապետները կրթություն ստանալու նպատակով մեկնելու են արտասահման: «...միայն Կոմիտաս վարդապետի ուսման ծախքն է, որ խոստացել է հոգալ թիֆլիսեցի պ. Ա. Մանթաշյանը»:

«Նոր դար», 1896, No 80, էջ 2:

Մայիս 15, Թիֆլիս- «Արձագանք» լրագրի հերթական համարում «Ներքին տեսություն» բաժնում հրապարակվում է հաղորդագրություն Կոմիտաս վարդապետի արտասահման գնալու վերաբերյալ. «...ձեմարան ավարտած սաներից արժ. Կոմիտաս վարդապետը,- ասված է հաղորդագրության մեջ,- որ երգեցողության ուսուցիչ էր ձեմարանում, անցյալ տարի և այս տարի Թիֆլիսում պ. Եկմայանին էր աշակերտում, իրավունք ստացավ նորին Վեհափառությունից արտասահման գնալու և երաժշտական արվեստում կատարելագործվելու: Հայր Կոմիտաս վարդապետի ուսման ծախքը հոգալ խոստացել է հայտնի բարեգործ պ. Ալեքսանդր Մանթաշյանը, որին այդ առիթով ազգիս Վեհափառ կաթողիկոսը յուր առաքելական օրհնությունը հաճեցավ տալ հատուկ կոնդակով»:

«Արձագանք», 1896, No 54, էջ 2:

Հունվար»մայիս, Թիֆլիս- Կոմիտասը որոշ ընդմիջումներով Եկմայանի մոտ շարունակում է պարապմունքները «Երաժշտության ներդաշնակության տեսության» վերաբերյալ, միաժամանակ սկսում է սովորել նաև «Նվագածություն» այնքան, որքան անհրաժեշտ է ներդաշնակության և երգեցողության համար»:

Կոմիտաս, Նամակներ, 2000, էջ 80:

Մայիս 30, Էջմիածին- Ճեմարանի տեսուչ Կ. Կոստանյանը կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին է ներկայացնում հետևյալ զեկուցագիրը.

«Ուսուցիչը ձեմարանիս թվով 14 են (ցուցակ դ) ըստ մեծի մասին պաշտօնեայք հրավիրեալք յանցելումն ամի ի նորոյ հրավիրվեցան ըստ հրամանի վեհափառութեանդ պ. Ստեփանոս Կանաեանի տեղի պ. Մինասայ Բերբերեան հրաժարելոյն ի պաշտօնէ է, հ. Ղևոնդ վարդապետ ի տեղի հ. Կոմիտաս վարդապետի, որ առաքեցաւ յուսումն»:

ՀՀՊԿՊԱ, No 56, կուլտ-կենցաղային բաժին, Գ. No 359, թ. 36:

ԲՀԱ, 1966, No 2, էջ 167-168

Հունիս [2-3], Բեռլին- Երաժշտության մեջ կատարելագործվելու համար Գերմանիա մեկնող Կոմիտասը հասնում է Բեռլին:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 45:
ՉԱԳԱԹ, Կ. Կոստանյանի ֆ. 1095:

Հունիս 3, Վան- Սկսվում է հայերի զանգվածային կոտորածը: 1-ին օրը սպանվում են 700 մարդ: Հայերը կազմակերպում են զինված ինքնապաշտպանություն: 15000 համիդիներ և կանոնավոր զորքը հարձակվում են վանեցիների վրա, կոտորածը շարունակվում է:

Շ. Հարություն, Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն, Ե., 1955, էջ 221:

Հունիս 4, Բեռլին- Մեկ»երկու օր առաջ Բեռլին հասած Կոմիտաս վարդապետը նամակ է ուղարկում Նոր Նախիջևան՝ Մինաս Բերբերյանին: Տեղյակ է պահում, որ իջևանել է Գարեգին սարկավազ Հովսեփյանի մոտ և զբաղվում է «գերմաներենով ու դաշնակով»:

Հունիս 15, Բեռլին- Կոմիտասը Գարեգին սարկավազի մոտից տեղափոխվում է Արշակ սարկավազի մոտ:

ՉԱԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆ. No 133:

Նույն օրը, Կ. Պոլիս- «Մասիս» շաբաթաթերթում տպագրվում է հաղորդագրություն. «Տ. Կոմիտաս վարդապետ Սողոմոնյան կուտինացի Գերմանիա գնացած է եկեղեցական երաժշտության համար»:

«Մասիս», 1896, No 3, էջ 91:

Հունիս 18, Բեռլին- Արշակ, Գարեգին սարկավազները և Հուսիկ, Կոմիտաս վարդապետները միացյալ նամակ են գրում Փարիզի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում սովորող Մանուկ Աբեղյանին: «Հարգելի եղբայր Մանուկ,- ասված է նամակում,- բավականին ժամանակ է, որ քո մասին տեղեկություն չունեմ: Այսօր մտաբերելով քեզ գրում եմ այս տոմսը և լիակատար առողջություն ցանկանում: Կոմիտաս հայր սուրբն արդեն երեք օր է, որ այստեղ է: Երևի շուտով Լայպցիգ է գնալու: Այսօր գնալու ենք թատրոն: Թատրոնից հետո մի ռեստորանում խմելու ենք քո կենացը: Հովհաննեսի մահվան մասին երևի կարդացած կլինես «Նոր դարում»:

Արշակ Սարկավազ

Ողջույն քեզ Մանուկ ջան:

Կոմիտաս վարդապետ

Մրտագին ողջույններով:

Հուսիկ վարդապետ:

Մի՞րո ողջույններ կգրեմ, տեղեկություններ ունեմ հաղորդելու:

Գարեգին սարկավազ:

ՉԱԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆ. No 133:

Հունիս [20-21], Բեռլին- Կոմիտասը ներկայանում է Արքունի կոնսերվատորիայի տեսուչ, հռչակավոր ջութակահար, երաժշտագետ Յոզեֆ Իռախիմին: Վերջինս ծանոթանալով Կոմիտասին հանձն է առնում «առանց արգելքի» նրան ընդունել Արքունի կոնսերվատորիայում՝ իբրև իսկական ուսանող: Նրա խորհրդով Կոմիտասը պետք է սովորեր նաև երաժշտանոցին կից Եկեղեցական երաժշտության ճեմարանում՝ հոկտեմբերից սկսած:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 81-82:

Նույն շրջանում, Բեռլին- Յոզեֆ Իռախիմը Կոմիտասին ներկայացնում է Եկեղեցական երաժշտության ճեմարանի տեսուչ Ռադեկին: Վերջինս խոստանում է բացառության կարգով Կոմիտասին ընդունել ճեմարան՝ միայն թե իբրև ազատ ունկնդիր, որովհետև այդտեղ ընդունվում են միայն գերմանացիները:

Նույն տեղում:

Հունիս երկրորդ կես, Բեռլին- Ընկերները Կոմիտասի համար վարձում են քաղաքի կենտրոնից բավական հեռու գտնվող Կոխ փողոցում (No 73) մի էժանագին բնակարան, որի հինգերորդ հարկում ապրելու էր նա: «Մենյակը,- պատմում է ականատեսը,- բավական ընդարձակ էր, բավական լավ կահավորված ու զարդարված և Կոմիտասին շատ դուր էր գալիս: Նա այստեղ բոլորովին առանձնացած էր, որքան երգեր ու նվագեր, ոչ ոք չէր խանգարում, ուրիշներն էլ իրեն չէին խանգարում»:

Երեք տարի Կոմիտասը մնում է այս սենյակում:

Ժամ. Կոմիտասի մասին, 1960, էջ 65:

Հունիս երկրորդ կես, Բեռլին- Ամառային արձակուրդից օգուտ քաղելով՝ Կոմիտասը մի կողմից վարժվում է գերմաներենի ուսումնառության մեջ, մյուս կողմից «Թերությունները լրացնելու» նպատակով դիմում է մասնավոր երաժշտանոցի ուսուցչապետ Ռիխարդ Շմիդտին: Վերջինս Կոմիտասի գիտելիքների հետ ծանոթանալուց հետո հանձն է առնում, օգնելու նպատակով պարապել նրա հետ:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 82-83:

Հունիս, Կ. Պոլիս- «Մասիս» պարբերականի հերթական համարի «Ազգային լուրեր» բաժնում հրապարակվում է տեղեկություն Կոմիտաս վարդապետի Գերմանիա գնալու վերաբերյալ:

«Մասիս», Կ. Պոլիս, 1896, No 3, էջ 91:

Հուլիս 30, Բեռլին- Կոմիտասը հետամուտ է լինում ու շարունակում է հմտանալ գերմաներենի ուսումնառության մեջ և ապա Ռիխարդ Շմիդտի կողմից նրա առաջ խնդիր է դրվում ուսանել երաժշտական արվեստի հրահանգները, որը նա պետք է ի կատար ածեր սկսած հոկտեմբերի 15 -ից:

Զեկույց Գևորգյան Հոգևոր ճեմարանի վարչությանը,
տե՛ս Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 46-47:

Հուլիս 2, Բեռլին- Կոմիտասը նամակ է գրում Գևորգյան Ճեմարանի տեսուչ Կ. Կոստանյանին և հայտնում է նրան, որ իր Դրեզդեն գնալը չի հաջողվել և որոշել է մնալ Բեռլինում: Նամակում Կոմիտասը պատմում է Արքունի կոնսերվատորիայի տեսուչ Յոզեֆ Իռախիմի հետ իր ունեցած հանդիպման և ուսանելու առիթով նրա տված ցուցումների մասին:

Նամակում Կոմիտասի ուշադրությունից չի վրիպում այն հանգամանքը, որ Յոխիմի «երաժշտանոցին կից կա մի այլ հիմնարկություն՝ Ճեմարան եկեղեցական երաժշտության, որ ուրիշ տեղ չկա»:

Կոմիտասը ներկայանում է այդ դպրոցի տեսուչ Ռադեկին, որը նրան խոստանում է ընդունել իր երաժշտանոցում «որպես ազատ ունկնդիր»: «Ուրեմն,- շարունակում է Կոմիտասը,- իսկական ուսանող պետք է լինեմ երաժշտանոցի և (ազատ ունկնդիր - Խ. Ս.) եկեղեցական երաժշտության Ճեմարանի հոկտեմբերից սկսած...»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 82:

Հուլիս 3, Էջմիածին- Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը No 927 կոնդակով «Բազմի հայոց մարդասիրական ընկերության խորհրդին» հանձնարարում է Հովակիմ Աղամյանցի և Գրիգոր Թումանյանցի կտակած գումարների տոկոսից որոշ բաժին հատկացնել Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի ընթերցարան սաներին, որոնք բարձրագույն կրթություն են ստանում արտասահմանում:

«Երկուքն ի սոցանէ,- ասված է կոնդակում,- Տ. Կոմիտաս և Տ. Յուսիկ գտանին արդեն իսկ ի Գերմանիա և ունին ուսանիլ մին զերաժշտութիւն և միւսն զաստուածաբանական գիտելիս...»:

«Էջմիածին», 1948, No 1-2, էջ 58:

Հուլիս 4, Էջմիածին- Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը No 439 կոնդակով Ճեմարանի վարչությանը հրահանգում է, թե որ հասույթից, ինչ չափով պետք է հոգավ արտասահմանում սովորող հոգևոր սաների ծախսերը: Սույն կոնդակից նաև պարզվում է, որ «... Կոմիտասը արդեն հասել է իր նպատակավայրը»:

Այնուհետև կաթողիկոսը հանձնարարում է «...Եզնիկ վարդապետին տալ այժմէն իսկ վասն ծախուց ճանապարհի մի հարիւր յիսուն ռուբլի, այլն մնացորդաց տոկոսեացն (խոսքը Հ. Աղամյանի և Գ. Թումանյանի կտակած գումարների մասին է - Խ. Ս.) յաւելեալ երիս հարիւր ռուբլիս ի վերայ թոշակին Կոմիտաս վարդապետին, որում բարեբար հանդիսացեալ է բարեպաշտն Սանթաշեան յատկացուցանելով նմա վեց հարիւր ռուբլի տարին...»:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 56, տնտեսական բաժին, գ. No 286, թ. 20-21:

Հուլիս 28/16 (հ. տ.), Բեռլին- Կոմիտասը գրախանութից գնում է Լյուդվիգ Բուսսլերի «Contrapunkt und fuge im freien tonsatz einschlieblich ChOrcomposition» («Կոնտրապունկտը և ֆուգան երաժշտական ազատ ֆրագում», Բեռլին, 1878, 200 էջ) վերնագրով գիրքը:

Նույն օրը գնում է նույն հեղինակի «Der strenge Satz in der muzikalischen compositions lehre» («Երաժշտական կոմպոզիցիայի ձեռնարկ», Բեռլին, 1878, 224 +12 էջ) վերնագրով գիրքը:

քը:

Նույն օրը, նույն գրախանութից գնում է նույն հեղինակի «Partitur – studium modulation der klassischen meister...» («Պարտիտուրայի ուսումնասիրումը: Դասականների մոդուլացումը», Բեռլին, 1878, 352 էջ) վերնագրով գիրքը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 1023, 1024, 1025:

Հուլիս 29/17 (հ.տ.) Բեռլին- Կոմիտասը գրախանութից գնում է Հերման Վոլֆի «Kurzgefalte allgemeine musiklehze» («Համընդհանուր երաժշտական ուսմունքի համառոտագրությունը», Բեռլին, 1882, 92 էջ) վերնագրով գիրքը:

[Հուլիս վերջ], Բեռլին- Ռիխարդ Շմիդտի մոտ «մասնավոր դասեր առնելու ընթացքում» Կոմիտասի համար ակնհայտ է դառնում, որ «Արքունի կոնսերվատորիայի» դասընթացի տևողությունը (վեց տարի) չի համընկնում իր ունեցած ժամանակի հետ: Ուստի պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի խորհրդով հրաժարվում է Արքունի կոնսերվատորիայում սովորելու մտքից: Ելնելով Կոմիտասի վիճակից՝ Ռ. Շմիդտը նրան «մասնավոր դասեր առնելու խորհուրդն» է տալիս և ինքը «հանձնառու է լինում» պարապելու հետը: «Մասնավոր դասերի օգուտը,- գրում է Կոմիտասը Կ. Կոստանյանին,- շատ է, ընթացքը արագ է, որպես և իմ ժամանակը՝ կարճ. ինչու՞ ես վեց տարի առաջ այստեղ չեղա»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 82-83:

Նույն շրջանում, Բեռլին- Հրաժարվելով Արքունի կոնսերվատորիայում սովորելու մտքից՝ Կոմիտասը որոշում է իր ուսումնառությունը շարունակել Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ. 65:

Հուլիս, Թիֆլիս- «Լումա» հանդեսի հերթական համարում՝ «Այլևայլ» խորագրով բաժնում հրապարակվում է տեղեկություն. կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հոգացողության և եվրոպական լուսավորության հանդեպ ունեցած վերաբերմունքի շնորհիվ ձեմարանի շրջանավարտների համար հնարավորություն է ստեղծվել եվրոպական կրթություն ստանալու: «...Արդ կարող ենք ավետել մեր ընթերցողներին,- ասված է հաղորդագրության մեջ,- որ նորանցից Հուսիկ և Կոմիտաս վարդապետներն արդեն մեկնել են արտասահման...»:

«Լումա», 1896, գիրք Բ, էջ 342:

Հուլիս 1»31, Բեռլին- «Ամառնային արձակուրդից օգուտ քաղելով» Կոմիտասը մի կողմից վարժվում է գերմաներենի ուսումնառության մեջ, մյուս կողմից «թերությունները լրացնելու, որքան կարելի է առաջ ընթանալու նպատակով նա միաժամանակ» «Harmonielehze»-ի՝ երաժշտական արվեստի հրահանգների վերաբերյալ դասեր է առնում մասնավոր երաժշտանոցի ուսուցչապետ Ռիխարդ Շմիդտից:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 82-83:

Օգոստոս 15/3 (հ.տ.), Բեռլին- Կոմիտասը լուսանկարվում է աշխարհիկ տարագով,

գլխաբաց:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ. 161: Արտատպությունը տե՛ս **Կարո Գևորգյան**, Ամենուն տարեգիրք, Պեյրուրթ, 1856, էջ 21:

Օգոստոս 18, Բեռլին- Կոմիտասը գրախանութից գնում է Լյուդվիգ Բուսսլերի «Lexikon der muzikalischen harmonieen» («Երաժշտական հարմոնիայի լեքսիկոն» վերնագրով գերմաներեն գիրքը, Բեռլին, 1889) և նույն հեղինակի «Musikalische formenlehre» («Երաժշտական ձևեր վերնագրով գիրքը, Բեռլին, 1894) վերնագրով գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1012, 1013:

Օգոստոս, Վաղարշապատ- Մայր Աթոռի տպարանում լույս է տեսնում «Արարատ» ամսագրի հերթական համարը: «Պաշտոնական» խորագրի ներքո հրատարակվում են քաղվածքներ կաթողիկոսական կոնդակներից: No 934 կոնդակով Մկրտիչ Խրիմյանը Գևորգյան ճեմարանի վարչությանը հանձնարարում է Սինոդից ստանալ Բագվի Մարդասիրական ընկերության կտակած գումարների տոկոսները՝ Բեռլինում «գեկեդեցական երաժշտություն» սովորող Կոմիտասին և մյուսներին, կրթաթոշակը վճարելու համար: Միաժամանակ պարտավորեցնում է ճեմարանի վարչությանը հրահանգներ տալ և հետևել նրանց ուսման ընթացքին:

«Արարատ», 1896, No 8, էջ 384:

Օգոստոս 1- սեպտեմբերի 1, Բեռլին- «Ամառնային արձակուրդից օգուտ քաղելով Կոմիտասը մի կողմից վարժվում է գերմաներենի ուսումնառության մեջ, մյուս կողմից «Թերությունները լրացնելու, որքան կարելի է առաջ ընթանալու նպատակով նա միաժամանակ «Harmonielche»-ի, «Ձուսումն դարձուածոց դասական երաժշտապետաց...», ինչպես նաև «Զխիստ ոճ՝ երաժշտական շարադրության» վերաբերյալ դասեր է առնում մասնավոր երաժշտանոցի ուսուցչապետ Ռիխարդ Շմիդտից:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 82-83:

Սեպտեմբեր, Վիեննա- «Հանդես ամսօրեա» պարբերականի հերթական համարում, «Ազգային թերթերի ծաղկեփունջ» խորագրի ներքո հրատարակվում է տեղեկություն Եկմալյանի պատարագի տպագրության ընթացքի մասին: Ծանուցման մեջ խմբագրությունը խոստանում է տպագրությունը ավարտելուց հետո «վերջնական կարծիք հայտնել» այդ աշխատության մասին:

«Հանդես ամսօրեա», Վիեննա, 1896, No 9, էջ 287:

Աշուն, [սեպտեմբեր-հոկտեմբեր], Բեռլին- Փարիզից Բեռլին եկած Մանուկ Աբեդյանը այցելում է Կոմիտասին: Մինչև 1898 թվականի սեպտեմբերը մնալով Բեռլինում՝ գրեթե ամեն կիրակի ճաշից հետո նրանք հանդիպում են միմյանց: «Նա,- գրում է Մ. Աբեդյանը,- հետը բերել էր իր ձայնագրած ժողովրդական երգերն ու նվագում էր ամեն անգամ, երբ նրա մոտ էինք գնում»:

Ժամ. Կոմիտասի մասին, 1960, էջ 65:

Հուլիս 30 [14] հոկտեմբերի, Բեռլին- «Ամառնային արձակուրդից օգուտ քաղելով՝ Կոմիտասը հմտանում է մի կողմից «Գերմաներենի ուսումնառության մեջ», մյուս կողմից «Թերությունները լրացնելու» և «Երաժշտական արվեստի հրահանգների» մեջ որքան կարելի է առաջ ընթանալու նկատառումով Ռիխարդ Շմիդտի հանձնարարությամբ մինչև ձմեռային կիսամյակի սկիզբը (15-ը հոկտեմբերի) ուսանում է հետևյալ առարկաները.

ա. Ձուտումն երաժշտական ներդաշնակության (Harmonielchze):

բ. Ձուտումն դարձվածոց դասական երաժշտապետաց (Modulation dez klassischen Meister):

Կոմիտաս, Նամակներ, Ե., էջ 47:

Հոկտեմբեր 15, Բեռլին- Հրաժարվելով Յոզեֆ Իոլիմի համալսարանում ուսանելու մտքից՝ Կոմիտասը Ռիխարդ Շմիդտի հրավերով ձմեռային կիսամյակի սկզբից (15-ը հոկտեմբերի) սկսում է իր երաժշտական ուսումնառությունը պաշտոնապես շարունակել նրա գլխավորած մասնավոր երաժշտանոցում:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 46-47:

Հոկտեմբեր 15, Բեռլին- Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում (Պոտսդամերշտրասսե, No 104) Կոմիտասը դառնում է օրինականացված ուսանող և Շմիդտի ղեկավարությամբ պետք է ուսաներ հետևյալ առարկաները.

1. Զխիստ ոճ (եկեղեցական իմա) երաժշտական շարադրության

2. Ջազատ ոճ

3. Դաշնակ

«Այստեղ,- գրում է գերմանացի հետազոտող Ռայնարդ Շեսկուսը, - դասավանդում էին երաժշտության պատմություն, մեթոդիկա, տեսություն և կոմպոզիցիա, հատուկ սեմինարներ էին անցկացվում դաշնամուրի և երգեցողության ուսուցիչներ պատրաստելու համար, տրվում էին նաև վոկալ անսամբլի և խմբերգային դերերգերի ուսուցում: Նվագել սովորելու համար կարելի էր հաճախել դաշնամուրի, ջութակի և թավջութակի դասերի, կամերային երաժշտության դասընթացը հնարավորություն էր տալիս վարժվել անսամբլային կատարմանը, բացի այդ բոլորից, կային մեներգեցողության պարապմունքներ: Հիմնական առարկաները՝ դաշնամուրը, անսամբլային և խմբական երգեցողությունը, օպերային դերերգի ուսուցումը, կոմպոզիցիան և երաժշտության տեսությունն ու պատմությունը դասավանդում էր Ռիխարդ Շմիդտը»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 47:

Կոմիտասական, հատ 2, Ե., 1981, էջ 26:

Հոկտեմբեր 22, Բեռլին- Երաժշտական կրթություն ստանալու նպատակով Գերմանիա եկած Կոմիտասը, Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցին զուգընթաց ընդունվում է նաև Բեռլինի Ֆրեդերիկ Վիլհելմ Արքունի համալսարանի փիլիսոփայության բաժին և որպես իսկական ուսանող մասնակցում է ութամյա դասընթացներին:

Այստեղ նա պետք է ուսաներ հետևյալ առարկաները.

1. Չպատմություն երաժշտության ԺՁ դարուց անտի ի վեր

2. Զերաժշտական գիտնական գիրահանգս

3. Ձտարերս երաժշտական շարադրութեան:

«Ձմեռային վեցամսյակի սկզբին,- գրում է Կոմիտասը Կարապետ Կոստանյանին ուղղված նամակում,- ուսանող գրվեցա տեղական համալսարանում երաժշտության պատմության առարկաներ լսելու համար»:

Բեռլինում Համբուրգի անվան համալսարանի արխիվում պահվող Ֆրեդերիկ Վիլհելմ հաստատությանը պատկանող ընդունելության մատյանների 677/87 թվահամարի տակ կան Կոմիտասին վերաբերվող գրառումներ, ուր ասված է. «Օննդավայրը՝ Քեոթահիա, Թուրքիայում, հայրը՝ կոշկակար, ինքը ուսան[ող] փիլ[իսոփայության բաժնում]:

Այս համալսարանում Կոմիտասը ունկնդրում է անվանի երաժշտագետ դասախոսներ Օսկար Ֆլայշերին, Մաքս Ֆրիդլենդերին և Հայնրիխ Բելերմանին:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 47, 83-84:

Կոմիտասական, հտ. 2, Ե., 1981, էջ 26-27:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 64

Հուլիս»հոկտեմբեր, Բեռլին- Այս ժամանակահատվածում Կոմիտասը գտնվում էր նյութապես ծանր կացության մեջ և Կ. Կոստանյանին գրած նամակներում հաճախ է կանգատվում այդ առիթով:

Այս մասին մանրամասներ կան նաև Մարգարիտ Բաբայանի հուշերում: «Իր պրոֆեսորը,- գրում է նա,- կնկատե, որ երիտասարդը քանի կերթա ավելի ու ավելի կնվազի ու կհալի: Վերջապես մի օր դասեն հետո՝ իր գործերը ձգած՝ կհետևի մեր վարդապետին և կմտնե նույնիսկ պանդոկը և հեռվեն կտեսնե նրա համեստ կերածը, այնուհետև կշարունակե հետևիլ մինչև Կոմիտասին բնակարանը և կերթա ծանոթանալու տանտիկնոջ հետ... դասատուն մնում է ամբողջ կեսօրը ընդունարանում և ունկնդրում է ինչպես վարդապետը երգեհոն է նվագում, մերթ դաշնամուր, մերթ երգում է և սարսափով հասկանում է, որ տղան ուտելու առիթ չի գտնում:

Շարունակությունը Մ. Բաբայանին պատմել է Կոմիտասը. «Ժամը 10-ին իրիկունը դուռս կբախեն, զարմացած պրոֆեսորիս կտեսնեմ դռան ետևը: «Դուք, սիրելի պրոֆեսոր, այստեղ»:

Շմիդտը ներս է մտնում և սկսում է սաստիկ բարկանալ «Դու, անպիտան, ինձ կվճարես, երբ ուտելու հաց չունիս:

Կարգելեմ քեզ մի պֆենիգ ինձ վճարելու այսուհետև»:

Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Ե., 1960, էջ 143-144:

[Հոկտեմբեր-նոյեմբեր], Բեռլին- Կոմիտասը «շաբաթական երկու անգամ փոխվեփոխ» ճաշում էր իր ուսուցիչ Ռիչարդ Շմիդտի տանը, ազատ մուտք ուներ նրա ընտանիքում և հաճախակի ձրի տոմսակներ էր ստանում օպերա, ֆիլհարմոնիա և սիմֆոնիկ համերգներ հաճախելու համար: Շնորհիվ Ռիչարդ Շմիդտի՝ նա ներգրավվում է երաժշտական-գեղարվեստագետների մի ընդարձակ շրջանի մեջ: «Ձանազան երաժշտական աշխատություններ ենք գրում,- հաղորդում է Կոմիտասը Կ. Կոստանյանին,- և երեկույթ կազմում մասնավոր տներում, նվագում, քննում ենք գրվածքը և վիճաբանում. իմ գրած երաժշտական բեկորները ուսուցչապետս հանձնառու եղավ տպել տալու յուր ծաղրով, բայց ես չեմ շտապում մինչև ամեն գաղտնիքների խորը չթափանցեմ, չեմ տպել տալու»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 83:

Նոյեմբեր 22/24 դեկտեմբեր, Բեռլին- Կոմիտասը նամակ է գրում Կարապետ Կոստանյանին: Նկարագրելով գործերի ընթացքը՝ Կոմիտասը խոսում է ուսուցչապետի կողմից իր հանդեպ ցուցաբերվող սիրալիր վերաբերմունքի, երաժշտական երեկույթներում ու երաժշտա՝գեղարվեստագետների շրջանում իր ունեցած հաջողությունների մասին: Վերջում Կոմիտասը գանգատվում է մատների անվարժությունից և խնդրում է իր ողջույնները հաղորդել «բոլոր ուսուցչաց» և «ընտանեաց»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 83:

Նոյն օրը, Բեռլին- Կոմիտասը Կ. Կոստանյանի նամակի հետ մեկտեղ նրան է ուղարկում «Եկեղեցական եղանակներից առնված» և «Երաժշտական օրենքների վերածած» «Միրո քո հուրը» վերնագրով եղանակի նոտագրությունը, մշակված երկձայն և քառաձայն խմբերի համար: «Տպագրել չտաք, - պատվիրում է Կոմիտասը, - որովհետև, գիտեմ, սխալ պետք է տպվի, իսկ սխալ տպվելով ներդաշնակությանց հիմքը բոլորովին կքանդվի, թող արտագրեն գրածիցս և պահել տվեք իսկականը»: Չայնագրության հետ մեկտեղ Կոմիտասը Կոստանյանին է ուղարկում «Մի խրատ սովորելու համար, որ չդժվարանան»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 83-84:

Կոմիտաս, Եժ., հտ. 8, Ե., 1998, էջ 124:

Նոյեմբեր-դեկտեմբեր, Բեռլին- Կոմիտասը նամակ է գրում Էջմիածին, Կարապետ վարդապետ Տեր՝Մկրտչյանին և խնդրում է նրա աշակերտներից մեկի միջոցով Մատենադարանում արտագրել տալ Մամվել Անեցու ձեռագրերից «Նոտագիր գիտելիքներ ձայների և երգերի մասին»: Հայտնում է նաև ձեռագրի համարը՝ 1700:

Կոմիտասի այդ նամակի ու՝ ր և ինչ լինելը տակավին հայտնի չէ:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 86

Դեկտեմբեր, Վիեննա- «Հանդես ամսօրեա» պարբերականի հերթական համարում լույս է տեսնում Տ.[րդատ] Պ.[այյանի] «Հայկական երաժշտության նորագյուտ դասագրքի մը մասին» խորագիրը կրող հոդվածը, որը արժանանում է Բեռլինում սովորող Կոմիտաս վարդապետի հատուկ ուշադրությանը:

«Հանդես ամսօրեա», Վիեննա, 1896, No 12, էջ 352:

Հոկտեմբեր 15»30 դեկտեմբերի, Բեռլին- Կոմիտասը Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում նրա ուսուցմամբ, մինչև ձմեռային կիսամյակի վերջը, ուսանում է «Զխիստ ոճն (գեկեղեցականն իմա) երաժշտական շարադրութեան» կոչվող առարկան (Der strenge Satz in der musikalischen Compositionslehre): Եվ ապա դեկտեմբերին՝ «արդ» սկսում է ուսանել՝ «լսել» Զազատ ոճն (Contrapunkt und Fuge im freien (modernen) Tonsatz einschliesslich Chorcomposition) և «Զդաշնակն (klavier) ընդ յար»:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 47:

Հոկտեմբեր 22-30 դեկտեմբեր, Բեռլին- Ֆրեդերիկ Վիլհելմ Արքունի համալսարանի փիլիսոփայական բաժնի ուսանող Կոմիտաս վարդապետը սկսած հոկտեմբերի 22-ից մինչև ձմեռային կիսամյակի վերջը՝ դեկտեմբերի 31-ը, ութժամյա ունկնդրությամբ լսում է Օսկար Ֆլայշերի, Մաքս Ֆրիդլենդերի և Հայնրիխ Բելերմանի դասախոսությունները՝ հետևյալ թեմաների վերաբերյալ.

«Ձպատմութիւն երաժշտութեան ի ԺԶ դարու անտի ի վեր (Musikgeschichte vom 16 Jahrhundert an. Prof. Fleischer):

Ձերաժշտական գիտնական գիրահանգս (Musikwissenschaftliche Uebungen im Instrumenten-Myseum. Professor Fleischer):

Ջտարերս երաժշտականի շարադրութեան (Die Elemente der musikalischen Composition):

Կոմիտասական, հտ. 2, Ե., 1981, էջ 26-27:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 47:

Դեկտեմբեր 31, Բեռլին- Գևորգյան Հոգևոր ճեմարանի վարչությանն ուղղված մի գրությամբ Բեռլինում սովորող Կոմիտաս վարդապետը յուրատեսակ զեկույց հաշվետվություն է ներկայացնում Բեռլինի կրթական հաստատություններում իր ձեռք բերած գիտելիքների վերաբերյալ:

Կոմիտասը Կարապետ Կոստանյանին իրազեկ է դարձնում, թե հունիսի 15-ից մինչև դեկտեմբերի վերջը ընկած ժամանակամիջոցում ինչ առարկաների մեջ է հմտացել Ռիխարդ Շմիդտի ուսուցմամբ և ինչ թեմայով դասախոսություններ է լսել Օսկար Ֆլայշերից Ֆրիդրիխ Վիլհելմ Արքունի համալսարանի փիլիսոփայության բաժնում:

Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 46-47:

Աշուն – տարեվերջ, Բեռլին- «Գրեթե ամեն կիրակի, ճաշից հետո Մանուկ Աբեղյանը այցելում է Կոմիտասին Կոխ փողոցի վրա գտնվող նրա տանը»:

Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Ե., 1960, էջ 65:

Տարվա ընթացքում, Կալկաթա- Լույս է տեսնում Էմի Աբգարի «Երգեցողությունք Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ պատարագամատույց» խորագրով գիրքը: Առաջաբանը՝ Էմի Աբգարի, էջ 10-135:

Ըստ հուշագիր Շ. Պերպերյանի հավաստիացման՝ Կոմիտասը այդ գիրքը նվեր է ստացել հեղինակից: «Երբ ես ըսի իրեն,- շարունակում է Շ. Պերպերյանը,- որ նույն պատարագը մեր Կուտինայի հասարակ կիրակիի պատարագն է, զարմացած նայեցավ և ուզեց, որ ես երգեմ քանի մը կտորներ, որուն վրա ուրախությամբ ըսավ. «տեսար, որ մեր Կուտինայի մեջ պահված են հայկական եղանակներն առանց ազդվելու Պոլսո մոտիկ կենտրոնէն»:

«Սիոն», Երուսաղեմ, 1936, No 1, էջ 23: